ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎՌԱՄ ԱԲԵՂԱ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ

(Է ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Միջին Ասիայում Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր-եկեղեցական վարչության սկզբնավորման նախադրյալները.-Պարսկաստանում Զ դարի վերջերին տեղի ունեցող ներքաղաքական վայրիվերումները շուրջ սպառնալիք են դառնում շուրջ չորս դար գահակալած Սասանյանների համար: 590 թ. պալատական դավադրության զոհ է դառնում Որմիզդ Չորրորդը: Անիշխանության պայմաններում ապստամբություն բարձրացրած պարսից զորավար Վահրամ (Բահրամ) Չուբինին հաջողվում է իր գլխավորած ռազմական ուժերի եւ Սասանյաններից դժգոհ ազնվականության միջոցով գալ իշխանության եւ հռչակվել թագավոր: Նման պայմաններում օրինական թագաժառանգ Խոսրովը, փախչում է Բյուզանդիա: Սասանյան Պարսկաստանի տարածքային զիջումների դիմաց Բյուզանդիայի Մորիկ (Մավրիկիոս) կայսեր տրամադրած բյուզանդա-հայկական ռազմական ուժերի օժանդակությամբ Սասանյաններին հաջողվում է վերականգնել իրենց իշխանությունը երկամյա կարճատեւ ընդմիջումից հետո: Խոսրով Բ Փարվեզի (591-628 թթ.) իշխանության վերականգնմամբ կնքվում է պարսկա-բյուզանդական 591 թ. դաշնագիրը (Հայաստանի 2-րդ բաժանում), ըստ որի Հայաստանի արեւելյան մասը, Վրաստանը եւ Միջագետքի մի շարք կարեւոր ամրոցներ անցնում են Բյուզանդական կայսրությանը: Կարճատեւ դադարը, որ հաջորդել էր տակավին Խոսրով Ա Անուշիրվանի (531-579 թթ.) գահակալության վերջին շրջանում սկիզբ առած քսանամյա պատերազմին, վերսրին խախտվում է 602 թվականին՝ սկիզբ դնելով պարսկաբյուզանդական պատերազմների նոր շարքի: 605 թվականին պարսկական զորքերը գրավում են Հայաստանի բյուզանդական մասը, Վրաստանը, Ասորիքը, Պաղեստինը, Երուսաղեմը, Եգիպտոսը՝ հասնելով Կ. Պոլիս: Աշխարհաքաղաքական նման իրավիճակը փոփոխվում է ի նպաստ Բյուզանդիայի միայն 627 թվականին:

Խոսրով Բ Փարվեզը, գահակալման առաջին տարիներին ամրապնդելով իշխանությունը եւ ապահովելով Բյուզանդիայի հետ խաղաղ փոխհարաբերություններ, իր ուշադրությունը սեւեռում է տերության վտանգված արեւելյան սահմաններին: Վտանգավոր կացությունը Պարսից տերության մերձմիջինասիական երկրամասերում ստեղծվել էր այնտեղ տեղափոխված ապստամբ ուժերի բարձրացրած խռովությամբ: Գահին սպառնացող ապստամբ ուժերը եւ հյուսիսարեւելյան սահմաններն ասպատակող վաչկատուն ցեղերի արտաքին սպառնալիքը (վերջիններիս տերությունը Սեբեոսն անվանում է «երկիրն Քուշանաց»[1]),

1 «Պատմութիւն Սեբէոսի», քննական բնագիր, աշխատասիր. Գ. Վ. Աբգարյանի, Եր.,1979, էջ 101: Հետ այսու՝ **Սեբէոս:** //Քուշաններն այս ժամանակ քաղաքական ասպարեզից հեռացել էին, եւ Սեբեոսի հիշատակած «երկիրն

նաեւ նրանց միջեւ հնարավոր դաշինքը հարկադրում են Խոսրով Բ Փարվեզին գահի եւ փերության անվտանգության ապահովման համար գործադրել ոչ միայն ուժային միջոցներ, այլեւ՝ քաղաքական հաշվենկատ քայլեր:

Պարսից փերության քաղաքական ճգնաժամը առավել սրվում էր Առաջավոր Ասիայի հպատակ ժողովուրդների դժգոհությամբ, որը հաճախ վերաճում էր զինված ապստամբության: 591 թվականին տեղի ունեցած Հայաստանի երկրորդ բաժանման արդյունքում հայոց նախարարական տներից շատերը բարձրացնում են վտանգավոր եւ հաճախ կրկնվող ապստամբություններ: Հայաստանի պարսկական հատվածում նման մի խռովություն վերածվում է քաղաքական սպառնալիքի: Հայ նախարարները, անցնելով Պարսկաստանի արեւելյան մարզերը՝ միանում են Խոսրովի դեմ ապստամբած նրա քեռուն՝ Վստամին, ապա ծառայության են անցնում թյուրք խաքանի մոտ[2]: Նման իրավիճակում, ինչպես Բյուզանդիայում, այնպես էլ Սասանյան Պարսկաստանում ծրագրային եւ հետեւողական կերպով իրականացվում է Հայաստանը ռազմական ուժից զրկելու քաղաքականություն: Խոսրով Բ Փարվեզը փերության արեւմտյան մարզերում իր նպատակների իրականացումը համակցում է արեւելյան սահմաններում ներքին եւ արտաքին քաղաքական խնդիրների լուծմանը: Ռազմական զգալի միջոցներ էին պահանջվում գործադրելու՝ արեւելյան մարզերում ապստամբ իրավիճակը կարգավորելու եւ արտաքին սպառնալիքը կասեցնելու ուղղությամբ: Պարսից վերնախավի անհուսալիության պայմաններում՝ Խոսրով Բ սկսում է վստահել Հայաստանից տեղահանված ազգային ռազմական ուժերը գլխավորող հայ ազնվականությանը: Նկատի ունենալով Պարսկաստանի արեւելքում քրիստոնեության առկայությունը եւ Միջին Ասիայում Թյուրքական խաքանության հաստատած գերիշխանությունը, որը կրում էր քրիստոնեության զգալի ազդեցություն՝ պարսից արքան արեւելյան հարցերի կարգավորումը հանձնարարում է Սմբատ Բագրատունուն: Վերջինս Բյուզանդիայում անհնազանդության եւ բարձրացրած ապստամբության պատճառով անցել էր Սասանյան Պարսկաստան եւ դեռեւս 591 թվականին բյուզանդահայկական զորաբանակում մասնակցել էր Պարսից գահի հավակնորդ Վահրամ Չուբինի դեմ մղված մարտերին[3]: Արդեն այս երկու հիմնական պատճառներով Սմբատ Բագրատունին կարող էր վայելել Սասանյան արքայի վստահությունը: Խոսրով Բ Փարվեզը Սմբատ Բագրատունուն Վրկան[4] աշխարհի մարզպանի կարգավիճակով առաքում է փերության արեւելյան մարզերը՝ նրան շնորհելով ռազմավարչական բացառիկ իրավասություններ[5]: Ներքաղաքական պայմաններում Սմբատ Բագրատունու հակաբյուզանդական դիրքորոշումը եւ քրիստոնյա լինելը պիտի բացառեին փերության այդ մասում Բյուզանդիայի կողմից հալածական նեստորականների համախմբումը ապստամբած մարզերում: Արտաքին քաղաքական ոլորտում նրա պաշտոնական ներկայությունը

Քուշանաց»-ն ունի աշխարհագրական նշանակություն՝ մատնանշելով Սասանյան Պարսկաստանի հյուսիս-արեւելյան սահմաններին հարող միջինասիական մարզերը, ուր հանդես էին գալիս հեփթաղները եւ նրանց ցեղակիցները, որոնք նույնպես այս փարածաշրջանում վերապրում էին իրենց պատմական ներկայության վերջին շրջանը:

2 «Հայ ժողովրդի պատմություն», Եր., 1984, հ. 2, էջ 287: Հետ այսու՝ ՀԺՊ:

3 Տե՛ս անդ, էջ 262-263:

4 Պատմական այս մարզը գտնվում էր Կասպից ծովի հարավարեւելյան ափին: Արդի Իրանի Մազանդարան օստանի հյուսիս-արեւելյան հատվածը:

5 Տե՛ս **Սեբէոս**, էջ 96:

պիտի հիմք հանդիսանար տարածաշրջանում հետզհետե հեփթաղներին փոխարինող եւ նեստորականության զգալի ազդեցության ներքո գտնվող Թյուրքական խաքանության հետ քաղաքական կայուն հարաբերություններ ստեղծելու համար:

Սասանյան Պարսկաստանի վարած քաղաքականությունը Զ դարի ավարտին՝ Խոսրով Բ Փարվեզի գահակալության դժվարին սկզբնաշրջանում, նպատակաուղղված էր ներքին կայունության եւ արտաքին անվտանգության ապահովմանը: Պարսից տերության արեւելյան մարզերում եւ միջինասիական տիրույթներում գործադրվում էին ոչ միայն փորձված քայլեր (պետական ռազմական ուժի գործադրում, հպատակ ազգերի ազնվականության ու ռազմական ուժերի տեղահանում), այլեւ քաղաքական նոր, հաշվենկատ միջոցներ: Ըստ այդմ՝ քրիստոնեությունը համարվում էր պաշտոնական քաղաքականության գործոն, եւ առաջին անգամ Սասանյան Պարսկաստանի զուտ պարսկական մարզերում պետական բարձրագույն պաշտոն էր տրամադրվում այլազգի եւ այլակրոն հպատակի՝ քրիստոնյա, Հայ Առաքելական Եկեղեցու հավատավոր զավակ, հայազգի Սմբատ Բագրատունուն:

Առկա քաղաքական պայմանները եւ Սմբատ Բագրատունու կողմից նրանց ընձեռած հնարավորությունների հմուտ եւ նպատակային գործածությունը դառնում են Միջին Ասիայում Հայ Առաքելական Եկեղեցու սկզբնավորման հիմնական նախադրյալները: Սասանյան Պարսկաստանի պատմական Պարթեւաց երկրի հյուսիսում՝ արդի միջինասիական հատվածում, նախ հիմնվում է տեղական նշանակության ծիսական եկեղեցի: Այնուհետեւ ամբողջ Միջին Ասիայի տարածքի եւ նրա հարակից հարավային եւ հարավարեւելյան շրջանների նվաճումով ձեւավորվում է հոգեւոր-եկեղեցական վարչություն՝ երկրամասի հայոց թեմը:

Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին եւ Հայ Առաքելական ծխական եկեղեցու հիմնադրումը Միջին Ասիայում.- Սասանյան Պարսկաստանի արեւելյան սահմաններ փախուստի դիմած ապստամբական ուժերը Բյուզանդական կայսրության աջակցությամբ գահին հաստատվող Խոսրով Բ Փարվեզի համար լուրջ սպառնալիք սկզբնական շրջանում չեն ներկայացնում: Բյուզանդահայկական զորքերի հետ ճակատամարտում պարտված Վահրամ Չուբինը, փախուստի դիմելով Թուրքեստան՝ հեփթաղների եւ Թյուրքական խաքանության կողմից վերահսկվող միջինասիական տարածքներ, ուր արդեն գտնվում էին արքայական ընտանիքի ապստամբ անդամները, շուտով սպանվում է: Ապստամբների անկազմակերպությունը եւ ներքին պառակտվածությունը, ինչպես նաեւ Խոսրով Բ Փարվեզի դաշնակցումը Բյուզանդիայի հետ առժամանակ հետաձգում են Պարսից պետական եւ ապստամբ ուժերի բախումը:

Կացությունը Սասանյան Պարսկաստանի արեւելքում դառնում է վտանգավոր, երբ ապստամբությունը սկսում է տարածվել եւ ընդգրկել մի քանի մարզեր. «...Էին ապստամբ ի ժամանակին յայնմիկ յարքայէն Պարսից, - գրում է Սեբեոսը, - երկիրքն, որ անուանեալ կոչին Ամաղ[6], Ռոյեան[7], Զրէճան[8] եւ Տապարաստան[9]»[10]: Կասպից ծովից հարավ եւ հարա-

6 Համարժեք գործածվում է նաեւ Ամոլ կամ Ամուլ անվանումը: Պատմական այս մարզը գտնվում էր Կասպից ծովի հարավային ափին:

7 Պատմական այս մարզը գտնվում էր Կասպից ծովի հարավային ափին, Ամաղից արեւմուտք:

8 Պետք է ենթադրել, որ համապատասխանում էր Սասանյան Պարսկաստանի Շանջան մարզին:

9 Պատմական այս մարզը գտնվում էր Կասպից ծովի հարավարեւելյան ափին, Ամաղից արեւելք:

10 Տես **Սեբէոս,** էջ 96:

վարեալք[11] գտնվող այս շրջանները դառնում են այն տարածաշրջանը, ուր մարզպանի կարգավիճակով դրության կարգավորման համար առաքվում է Սմբատ Բագրատունին: Ապստամբ երկրամասերում վտանգի տեղայնացման եւ արտաքին ուժերի՝ հյուսիս-արեւելքում հեփթաղների եւ Թ-յուրքական խաքանության հետ դաշնակցումը բացառելու նպատակով Պարսից արքունիքն իրականացնում է ռազմավարական քայլ: Խոսրով Բ Փարվեզն ընդարձակ մարզպանության կենտրոն է ընտրում ապստամբների թիկունքում գտնվող սահմանային Վրկան մարզը:

Ըստ Սեբեոսի անուղղակի տեղեկությունների՝ այս մարզի ընտրությունը պայմանավորվում է ոչ թե ապստամբական շրջաններից դուրս մնալով, այլ նրա միջոցով հակամարտության տարածքների սահմանափակման եւ ներպետական քաղաքական շրջագծում խնդրի պահպանման նպատակով:

Սեբեոսի արժեքավոր պատմական տեղեկությամբ ճշգրտվում են Սմբատ Բագրատունու ստանձնած իշխանության մանրամասները՝ պաշտոնական կարգավիճակը, իրավասությունների վարչատարածքային ընդգրկումը եւ լիազորությունների շրջանակը. «Եւ եղեւ ի ժամանակին յանմիկ հաճոյանալ Սմբատայ Բագրատունւոյ յաչս Խոսրովու արքային. տայ ի նա զմարզպանութիւն երկրին Վրկանայ, առնէ զնա իշխան ի վերայ ամենայն կողմանն այնորիկ, առաւել մեծացուցանէ պատուովք եւ իշխանութեամբ. լնու զնա ոսկւով եւ արծաթով, զարդարէ ի հանդերձս պատուականս եւ յերեւելիս: Տայ նմա զկամարն եւ զսուսերն լեալ հաւր իւրոյ Որմզդի. զումարէ ի ձեռս նորա զաւրս պարսիկս եւ զհայաստանեայս եւ հրամայէ գնալ յերկիր իշխանութեան իւրոյ»[12]:

Մարզպանությունը Սասանյան Պարսկաստանի սահմաններում որոշակի իրավասություններով գործող մարզպանի կողմից կառավարվող վարչական միավոր էր՝ տեղական ռազմական ուժերի առկայությամբ: Սմբատ Բագրատունու մարզպան նշանակվելու դեպքում այն ներկայանում է առավել ընդարձակ վարչատարածքային ընդգրկումով: «Ամենայն կողմանն», ուր իշխանության է կարգում Խոսրով Բ Փարվեզը Սմբատ Բագրատունուն, բովանդակում է Սեբեոսի հիշատակած չորս ապստամբ մարզպանությունները՝ «զորս վանեալ նորա պատերազմաւ՝ հարկանէր [Սմբատը-**Վ.ա.Ղ.**] սրով սուսերի եւ ի ծառայութիւն արքային Պարսից կացուցանէր»[13]: Սմբատի մարզպանական իշխանությունը, ըստ Սեբեոսի անուղղակի վկայության, այս մարզերից բացի ընդգրկում է նաեւ «երկիրն Պարթեւաց»: Պատմիչը նախ ներկայացնում է Սպահանի հայոց հեծելազորային կայազորի ապստամբությունը, որի մասնակիցները, պարսից արքայական զորքից հալածական, դիմում են «երկիրն Գեղմայ»՝[14] միանալու Խոսրովի ապստամբ մորեղբորը՝ Վստամին, բայց չհանդիպելով նրան, «ճանապարհ կալեալ զնացին յերկիրն Պարթեւաց, եւ երթեալ կային առաջի նորա»[15]: Այն, որ ապստամբ չորս մարզերը եւ «երկիրն Պարթեւաց»՝ Պարսկաստանի պատմական Պարթավա երկրամասը, Ապրշահրը կամ արդի Խորասանը, կազմում էին այն ըն-

11 Մանրամասն տե՛ս անդ, ծանոթագր. 275 եւ 276, էջ 258-259:

12 Անդ, էջ 96:

13 Անդ:

14 Գտնվում է Պարսկաստանի հյուսիսարեւմտյան՝ Կասպից ծովին հարող շրջանում: Արդի Իրանի Գիլան օստանը:

15 Տե՛ս **Սեբէոս**, էջ 96:

դարձակ փարածքը, որի վրա փարածվում էր Սմբատ Բագրատունու իշխանությունը, վկայում են Խոսրովի կողմից վերջինիս տրված արքայական պատիվները:

Որմիզդ Չորրորդի կամարը եւ սուրը նախատեսվում էին Վստամի՝ Խոսրովի հոր սպանության կազմակերպչի նկատմամբ Պարթեւաց երկրում պատժիչ գործողություններ իրականացնելու համար: Այս հանգամանքը վկայում է Սմբատ Բագրատունու իշխանության ոլորտում սույն երկրամասի ներգրավման մասին: Սեբեոսի անուղղակի վկայությունների համաձայն՝ Սմբատ Բագրատունու «Վրկանայ մարզպան» պաշտոնն արտահայտում է ոչ թե աշխարհագրական մասնավոր նշանակություն, այլ լիազորությունների տեսակ, որոնք առարկայական ձեւակերպում են ստանում՝ վերաբերելով որեւէ առանձին մարզպանության: Այդ մասին վկայում է Վրկանի մարզպանության ապստամբական վիճակը, ինչը պարզ է դառնում այն հանգամանքից, որ Սմբատ Բագրատունուն տրամադրված պարսկական եւ հայկական զորքերը նախատեսվում էին նաեւ այդ երկրամասի մարզպանական իշխանությունն իրականացնելու համար: Որեւէ հիշատակություն չկա արքայական զորքերը Վրկանի զորամիավորումներով համալրման մասին, ինչը կփաստեր մարզի հնազանդ լինելու հանգամանքը: Լրացուցիչ վկայություն է նաեւ Սմբատ Բագրատունուն նախորդած մարզպանի մասին հիշատակության բացակայությունը: Սա Խոսրովի կողմից այդ երկրամասում վարչական իշխանությունը պաշտոնապես չճանաչելու փաստացի արդյունք էր:

Ցույց տալու համար, որ Վրկանի վարչական տարածքով չէին սահմանափակվում Սմբատ Բագրատունու մարզպանական լիազորությունները, Սեբեոսը խուսափում է Սմբատի հաղթանակներից հետո նրա կողմից կատարվող շինարարական գործունեությունը մասնավորել Վրկան մարզպանությամբ: Պատմիչը գործածում է «ամենայն երկիրն իւրոյ մարզպանութեան»[16] արտահայտությունը, ինչով հաստատում է հնազանդված տարածքների ամբողջականությունը մեկ մարզպանի, այն է՝ «Վրկանայ մարզպան» Սմբատ Բագրատունու կողմից կառավարելու հանգամանքը: Մարզպանի կարգավիճակում Սմբատ Բագրատունին փաստացի իրականացնում է մի քանի մարզպանական վարչատարածքային միավորների վրա տարածվող փոխարքային համազոր, սակայն Պարսից արքունիքի կողմից չպաշտոնականացված իրավասություններ: «Մարզպանութեան» լայն նշանակությունը, որ գործածում է Սեբեոսը, թույլ է տալիս նաեւ ընդհանրացնել այն Սմբատ Բագրատունու՝ Հայաստանից վերադառնալուց հետո ստացած փաստացի եւ Պարսից արքունիքի կողմից օրինականորեն հաստատվող փոխարքա կարգավիճակի հետ: Արդեն այս հանգամանքը պատմիչը, թեեւ ոչ միանշանակ, որակում է որպես «տանուտէրութիւն»: Նա չի հրաժարվում կառավարման այս ժամանակաշրջանի համար գործածել նաեւ «մարզպանութիւն» եզրը:

Պարսկաստանի հյուսիսում եւ հյուսիսարեւելյան (միջինասիական) տիրույթներում, հաղթանակ տանելով ապստամբ ուժերի նկատմամբ՝ Սմբատ Բագրատունին իրականացնում է շինարարական գործունեություն. «...շինեալ հաստատէր զամենայն երկիր իւրոյ մարզպանութեան, քանզի էր երկիրն աւերակ»[17]: Սմբատ Բագրատունու շինարարական այս շրջանին է վերաբերում տարածաշրջանում Հայ Առաքելական Եկեղեցու սկզբնավորումը՝ իր թեմական հեւրազա կայացմամբ, որի հիմքն այս պահին դառնում է տեղական նշա-

16 Անդ:
17 Անդ:

նակության ծիսական եկեղեցու կառուցումը: Թեեւ Սեբեոսը համապատասխանում է ապստամբած մարզերի նկատմամբ Սմբատ Բագրատունու տարած հաղթանակները եւ հետո միայն նշում նրա շինարարական աշխատանքները, այնուամենայնիվ, արդեն գործող Հայ Առաքելական Եկեղեցու մասին հիշատակությունը վերաբերում է մինչեւ «Քուշանաց» նկատմամբ վերջնական հաղթանակը, իսկ թեմական կայացումը՝ հաջորդող ժամանակահատվածին: Սմբատն իրականացնում է շինարարական իր գործունեությունը՝ օգտվելով մարտական գործողություններին հաջորդող յուրաքանչյուր կարճատեւ դադարից: Գործող Հայ Առաքելական Եկեղեցու հիշատակությունը հաջորդում է Կասպից ծովի հարավային ափամերձ նահանգներում տեղի ունեցած ռազմական բախումներին եւ նախորդում ապստամբական ուժերի վերջին հանգրվան Տապարաստան մարզում ծավալվող մարտական գործողություններին: «Ժողովէին ամենայն զունդքն թշնամեաց, եւ երթեալ բանակէին ի Տապարաստան գաւառի, - հաղորդում է պատմիչը, - գումարէ եւ Սմբատ զամենայն զաւրսն իւր եւ ի դիմի հարկանի նոցա պատերազմաւ: Եւ մատնեաց տէր Աստուած զզաւրս թշնամեաց ի ձեռն Սմբատայ...».[18] այս հաղթանակը, որը ոչ պատահականորեն պատմիչի կողմից կապվում է ասպվածային նախախնամության հետ, ավարտին է հասցնում Սմբատ Բագրատունու՝ Դարսկաստանի արեւելյան ապստամբ մարզերի հնազանդեցման գլխավոր առաքելությունը: Սեբեոսը, Տապարաստանի վերջնամարտին նախընթաց ներկայացնելով Սմբատ Բագրատունու Գեղան մարզում անհաջող մարտարշավը, հիշատակում է ոմն Հովսեփի տեսիլքը: Թեեւ նրանով կանխատեսվում է գալիք մարտի անհաջող ելքը, սակայն կարեւորվում է տերունական խաչի մասունքի ասպվածային պարգեւը, որը պիտի նշան դառնար ավարտուն հաղթանակի: «Այր մի, ասէ, սքանչելատեսիլ, եկեալ ասէր ցիս, - կարդում ենք Հովսեփի տեսիլքի նկարագրության մեջ, - պատերազմ լինի զկնի երից ամսոց, եւ անկանին բազումք ի պատերազմին. բայց դու երթիջի՛ր ի տեղի պատերազմին. եւ նշան լիցի քեզ այս, զի տեսանիցես այր մի անկեալ ի վերայ երեսաց երկրի, եւ մարմին նորա պաղպաջէ ի մէջ ամենայն դիականցն, եւ դու երթեալ որ ինչ գտանիցես առ նմա, առցես ի քեզ: ...Եւ ունէր ընդ անձն շագոյր մաշկեղէն ուս ընդ անուր իւր: Ապա կայր մարմին նորա ի մէջ դիականցն. եւ մատուցեալ՝ առ յինքն զշագոյրն. եւ տեսանէր զի կայր ի նմա փուտ մի արծաթեղէն եւ խաչ մի ի մէջ նորա, յորում կայր մասն մեծ ի տէրունական խաչէն: Կնքէր զինքն նովաւ, եւ առեալ զնայր զհետ ընկերաց իւրոց»[19]: Այս տեսիլքի իրականացման առիթով է, որ հիշատակվում է գործող Հայ Առաքելական Եկեղեցին: Սմբատ Բագրատունին տերունական խաչի մասունքն ընծա է ստանում Հովսեփից՝ որպես Տապարաստանում ապստամբների նկատմամբ վերջնական հաղթանակի ասպվածային փնտրելության վկայություն. «...ունէր Յովսէփ զգիւտն իւր առաջի նորա եւ պատմէ զտեսիլն, եւ բազում նշանս... Յայնժամ յարուցեալ Սմբատ ծունր կրկնէր առաջի նորա, եւ առեալ յինքն՝ կնքէր զինքն նովաւ. եւ տայր ի ձեռն Միհրուի ուրումն առն երանելւոյ, զոր եւ կարգեալ էր ի վերայ տանն իւրոյ հաւատարիմ եւ կամակատար, որ ի տանէ Դիմաքսենից, եւ տայր յեկեղեցին զոր ունէին երիցունք դրան նորա»[20]:

Սեբեոսը գործող եկեղեցու հիշատակմամբ ճշգրտում է նրա գտնվելու վայրը: «Տանն

18 Անդ, էջ 99:
19 Անդ, էջ 98-99:
20 Անդ, էջ 99:

իւրոյ» եւ «դրան նորա» արտահայտություններով նա հաստատում է եկեղեցու առկայությունը Սմբատ Բագրատունու բանակատեղ-նստավայրում կամ «մարզպանութեան» վարչական կենտրոնում՝ չկապելով այն Վրկան աշխարհի կամ որեւէ այլ տեղանվան հետ: Համաձայն պատմիչի՝ Սասանյան Դարսկաստանի հյուսիսային եւ հյուսիսարեւելյան մարզերում Սմբատ Բագրատունու կողմից պետական իշխանության հաստատման ընթացքում բացակայում է մարզպանական իշխանության նստավայրի, այն է՝ վարչատարածքային կառավարման կենտրոնի գտնվելու վայրի մասին հիշատակությունը: Նման կենտրոնի մասին ճշգրիտ տեղեկություն պատմիչը հայտնում է միայն Սմբատ Բագրատունու՝ Հայաստանից վերադառնալուց եւ քուշանների դեմ հաղթանակ տանելուց հետո. «...երթեալ բնակէր[21] ի Մարգ եւ ի Մարգռոտ[22] գաւառի»[23], որը արդի միջինասիական սահմաններում գտնվող Մարգիանա կամ Մերվ քաղաքն է եւ որպես «գաւառ» ներկայացող Մուրղաբ գետի ավազանն ընդգրկող Մերվի օազիսը: Այս քաղաքն իր մերձակա ընդարձակ ենթաշրջանով գտնվում էր «Պարթեւաց» երկրի հյուսիսում եւ դեռեւս Վստամի սպանությունից եւ քուշանական զորքերի նահանջից հետո Սմբատ Բագրատունու պաշտոնավարման սկզբնական շրջանում մաս էր կազմում այն տարածաշրջանի, ուր հաստատվել էր վերջինիս իշխանությունը:

Սեբեոսի հաղորդած տեղեկություններով ճշտվում են Հայ Առաքելական եկեղեցու սկզբնավորման հանգամանքները եւ կարգավիճակը: Սմբատ Բագրատունու գլխավորած բանակը, որի հիմնական մասը թեեւ կազմում էր Դարսից պետական զորքը, մշտապես համալրված էր նաեւ հայոց ազգային այրուձիով՝ երկու հազար հայազգի մարտիկներով, որոնք տարբեր նախարարական տների զորամիավորումներն էին. «Այս են իշխանք նախարարացն Հայոց, որ ընդ նմա իրաքանչիւր գնդաւ եւ դրօշու. Վարազշապուհ Արծրունի, Սարգիս Տայեցի, Արտաւազդ եւ Վստամ եւ Հմայեակ Ապահունի, Մանուէլ Ապահունեաց տէր, Վռամ Գողթնեաց տէր, Սարգիս Դիմաքսեան, Սարգիս Տրպատունի, եւ այլք ի նախարարացն: Եւ զարք նորա իբրեւ երկու հազար հեծեալ՝ յաշխարհէն»[24]: Մեծաքանակ հայ զինվորականների հոգեւոր հոգածության համար Խոսրով Բ Փարվեզի ընձեռած դավանանքի ազատությունը եւ Սմբատ Բագրատունու քրիստոնյա լինելու քաղաքական նշանակությունը հնարավոր են դարձնում հայկական եկեղեցու շինարարությունը: Եկեղեցու առկայությունը մնայուն նշանակություն է ստանում Սմբատ Բագրատունու եւ հայոց հեծելազորի երկարաժամ-

---

21 Գ. Վ. Աբգարյանը, որ կազմել է Սեբեոսի «Պատմության» քննական բնագիրը, այս բառի փոխարեն գործածում է «բանակէր» բառը եւ իր կատարած փոփոխությունը չհիմնավորող ծանոթագրություն է տալիս. «Բոլոր ձեռագրերն ու տպագիրները մեր ուղղած «բանակէր»-ի փոխարեն ունեն «բնակէր»: Սակայն քանի որ պատմիչի խոսքը ոչ թե Սմբատ Բագրատունու զորքերի բնակավայրի, այլ բանակատեղի մասին է, ձեռագրի «բնակէր»-ը ուղղել ենք «բանակէր» (Տե՛ս **Սեբէոս**, ծան. 315, էջ 271):

Կարծում ենք բոլոր ձեռագրերում գործածվող «բնակէր»-ի վերականգնումը ավելի արդարացի է, մանավանդ որ այստեղ խոսքը վերաբերում է Սմբատ Բագրատունու նստավայրին, որը որքան բնակատեղ է մարզպանի համար, նույնքան եւ՝ զինվորական ուժերի բանակատեղի:

22 Հիշատակվող «Մարգ»-ը Մարգիանա, նույն ինքն Մարվ կամ Մերվ քաղաքն է: «Մարգռոտ»-ը, որ հիշատակվում է որպես գավառ, համապատասխանում է Մարվիռոտ տեղանվանը: Նկատի ունենալով, որ ռոտ կամ ռուդ բառերը պարսկերեն նշանակում են գետ՝ հիշատակությունը վերաբերում է Մուրղաբ գետին եւ շրջակայքին, որը հայտնի է որպես Մերվի օազիս, ինչը եւ գնահատվում է պատմիչի կողմից որպես «գաւառ» (**Սեբէոս**, ծանոթագր. 315, էջ 271-272):

23 Սեբէոս, էջ 103:

24 Անդ, էջ 101:

կեր ներկայությամբ. «Եւ կալաւ Սմբատ զմարզպանութիւն աշխարհին այնորիկ ամս Ը»[25]: Սմբատ Բագրատունին Դարսկաստանի արեւելյան մարզերում «Վրկանայ մարզպան»-ի կարգավիճակում պաշտոնավարում է 599 թվականից մինչեւ 607 թվականի վերջերը[26]: Այս ժամանակահատվածի համար ասված եւ եկեղեցուն վերաբերող «զոր ունէին երիցունք դրան նորա» Սեբեոսի միակ տեղեկությունը բացառում է Մարգ-Մերվի եկեղեցու թեմական կենտրոն լինելու հանգամանքը կամ պատկանելությունը տարածաշրջանի հոգեւոր-եկեղեցական վարչությանը: Այսպիսով՝ Հայ Առաքելական Եկեղեցու թեմական վարչության հիմնումը վերաբերում է Հայաստանից Սմբատ Բագրատունու վերադառնալուց հետո ընկած ժամանակահատվածին: Թեմական կենտրոնը, ինչպես պարզ է դառնում Սեբեոսի տեղեկություններից, դառնում է նույն Մարգ-Մերվի ծիսական եկեղեցին:

«Ցեր այսորիկ հրաման հասանէ, - գրում է Սեբեոսը Սմբատ Բագրատունու Հայաստան վերադարձի առնչությամբ, - կոչել զնա բազում մեծարանաւք ի դուռն արքունի, եւ հրամայէ երթալ տեսանել զերկիրն իւր»[27]: Դարսից արքունիքի նման կարգադրությունը պայմանավորված է Հայաստանում ծավալվող իրադարձությունների վտանգավորությամբ: Քաղկեդոնականությունը, որ Բյուզանդիայի ճնշմամբ տիրապետող էր դարձել Վրաստանում, սպառնալիք էր Մարզպանական Հայաստանի համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռի թափուր լինելը եւ Բյուզանդիայի նախաձեռնությամբ կարգված հակաթոռ երկաբնակ Կաթողիկոսի գործունեությամբ արագ տարածվող քաղկեդոնականությունը վտանգ էին Մարզպանական Հայաստանում Սասանյանների քաղաքական գերիշխանության համար: Քաղկեդոնականության միջոցով տարածվող Բյուզանդիայի ազդեցությունը խոչընդոտելու նպատակով Դարսից արքունիքը որոշում է Հայաստան ուղարկել ընդգծված հակաբյուզանդական եւ հակաքաղկեդոնական դիրքորոշում ունեցող Սմբատ Բագրատունուն:

Հայ եւ Վրաց եկեղեցիների հակամարտության միջոցով արտահայտվող բյուզանդա-պարսկական քաղաքական պայքարում Սմբատ Բագրատունու միջամտությունն ապահովում է Մարզպանական Հայաստանում Հայ Առաքելական Եկեղեցու դիրքի ամրապնդումը եւ բյուզանդական ազդեցության ներթափանցման կասեցումը[28]: Այսպիսով՝ Սմբատ Բագրատունին ներկայանում է տարածաշրջանում Սասանյան Դարսկաստանի պետական շահերի պաշտպան:

Փոխարքա «Խոսրով Շում» Սմբատ Բագրատունին եւ Միջին Ասիայի Հայոց թեմի սկզբնավորումը է դարի սկզբին.- Միջեկեղեցական հակամարտությամբ դրսեւորվող քաղաքական ճգնաժամի հանգուցալուծման գործում առանցքային դերակատարություն ցուցաբերած Սմբատ Բագրատունին 608 թ. գարնանը[29] ներկայանում է «մեծաւ շքեղութեամբ ի դուռն արքունի»[30]: Գնահատելով Հայաստանում Դարսից պետական

25 Անդ:

26 **Մաղաքիա արքեպս. Օրմանեան,** Ազգապատում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, Ա հ., §§ 394, 409 : Հետ այսու՝ «Ազգապատում»:

27 **Սեբէոս**, էջ 100:

28 Տես ՀԵՊ, էջ 57-59 եւ «Ազգապատում», Ա հ., §§ 389, 408:

29 «Ազգապատում», Ա հ., § 434:

30 Տես **Սեբէոս,** էջ 100:

քաղաքականության ձեռքբերումները՝ բացառիկ ընդունելության պայմաններում Խոսրով Բ Փարվեզը շնորհում է Սմբատ Բագրատունուն Պարսկաստանի արեւելյան մարզերի վրա տարածվող նոր եւ բարձր կարգավիճակ հաստատող իրավասություններ: Այս իրողությունը հնարավոր է դարձնում տարածաշրջանում Հայ Առաքելական Եկեղեցու թեմական վարչության սկզբնավորումը:

Իշխանության տեսակը, որի մասին վկայում է Սեբեոսը՝ թվարկելով լիազորությունների ամբողջությունը, անհամեմատ գերազանցում է Սմբատ Բագրատունու «Վրկանայ մարզպան»-ի տարածաշրջանային կազավիճակը: «**Յայնժամ տայ նմա արքայ զտանուտէրութիւն՝ որ անուանեալ կոչէր Խոսրով Շում,** - հաղորդում է պատմիչը, - **զարդարէ ի չքնաղս, ի գտակ եւ պատմուճան բեհեզեայս յոսկւոյ աւծեալ, մեծացուցանէ ահագին պատուաւք ի ճամբար ականակապ եւ ի գումարտակ, եւ ի գահս արծաթիս. արձակու ի նա զվաճառն փոքր, զդիւան աշխարհին... հրամայէ նմա առնել մարզպան՝ զոր ինքն կամեսցի**»[31]: Սմբատ Բագրատունու՝ մինչ այս հիմնականում ռազմական իշխանությամբ արտահայտվող մարզպանական կարգավիճակը ենթարկվում է զգալի փոփոխության՝ ձեռք բերելով ա) տնտեսական, բ) վարչական ինքնուրույն գործավարույթի առանձնաշնորհներ:

ա) Տնտեսական գործավարույթը: Աշխարհագրորեն ընդարձակ նշանակությամբ գործածվող «աշխարհ»-ի տնտեսավարման ոլորտում «զվաճառն փոքր» արտահայտությամբ պատմիչը հայտնում է Սմբատ Բագրատունու հարկահանության իրավասության մասին: Սասանյանների միապետական կենտրոնացված իշխանության հիմնական գործառույթներից էր հարկահանությունը: Սմբատ Բագրատունուն Խոսրով Բ Փարվեզի շնորհած «զդիւան աշխարհին» վարելու արտոնությունը աննախադեպ էր: «Դիվանը», լինելով գործավարույթային հաստատություն, զբաղվում էր ոչ միայն վարչակառավարման փաստաթղթերի նախապատրաստմամբ եւ ձեւակերպմամբ, այլեւ ծառայում էր որպես գանձապետարան՝ վարչատարածքային սահմաններում հարկաբաշխիչ մարմին: Ըստ այդմ՝ Սմբատ Բագրատունին արքայական շնորհի համաձայն ձեռք է բերում իրավունք իր գլխավորած վարչակառավարման տարածքում ստացվող նյութական միջոցներն ինքնուրույն տնօրինելու՝ տեղի տնտեսական եւ ռազմական կարիքների[32], առհասարակ Սասանյան քաղաքականության իրականացման համար,

բ) Վարչակառավարման գործավարույթը: Խոսրով արքայի մատուցած պատիվները, ուղեկցվելով արքայապարգեւ հատուկ ընծաներով, այն խորհրդանիշներն են, որոնցով ճշտվում են Սմբատ Բագրատունու դիրքը պետական պաշտոնական աստիճանակարգում եւ վարչական կարգավիճակը՝ Պարսկաստանի արեւելյան հատվածում պետական իշխանության իրականացման ընթացքում: Պատմիչի հաղորդած արքայական հրամանի մասին տեղեկությունը՝ «առնել մարզպան՝ զոր ինքն [Սմբատ Բագրատունին - **Վ.ա.Ղ.**] կամեսցի», հաստատում է կառավարման ենթակա տարածքային այն ամբողջականությունը, որի վրա մինչ այս տարածվում էր Սմբատ Բագրատունու մարզպանական իշխանությունը: Հաղորդվում է կազմավորող վարչատարածքային միավորների՝ մարզպանությունների պահպան-

31 Անդ, էջ 101:
32 Տես անդ, ծան. 300, էջ 263-264:

ման եւ կառավարման մարմինների վերականգնման մասին, սակայն ենթադաս կարգավիճակով: Այսպիսով Սմբատ Բագրատունու ստանձնած իշխանությունը կենտրոնական կառավարման մարմին էր Դարսկաստանի հյուսիսային եւ հյուսիսարեւելյան մարզերի համար:

Իշխանության այս տեսակը պատմիչը որակում է որպես «տանուտէրութիւն», որի պաշտոնավարման ընթացքում Սմբատ Բագրատունին Խոսրով Բ Փարվեզի կողմից «անուանեալ կոչէր Խոսրով Շում»:

Սասանյանների միապետական կառավարման համակարգի համար ոչ բնորոշ տվյալ ձեւակերպմամբ պաշտոնը, որ ստանձնում է Սմբատ Բագրատունին, Սեբեոսը ներկայացնում է Մարզպանական Հայաստանի կառավարմանը հատուկ ձեւակերպմամբ: Ե դարի երկրորդ կեսից Մարզպանական Հայաստանը, շնորհիվ ձեռքբերած ներքին կառավարման արտոնությունների[33], հայոց մեջ կոչվում է «Տանուտիրական երկիր», իսկ հայ կառավարիչ-մարզպանը՝ «Տանուտէր Հայոց»: Այս կերպ Սեբեոսը հաղորդում է Սմբատ Բագրատունու բացառիկ ինքնավարությամբ կառավարման առանձնահատկությունը: Շեշտելու համար Սմբատ Բագրատունու հայ-ազգային նկարագիրը՝ ազգային Եկեղեցու եւ հայրենիքի նկատմամբ նվիրվածությունը, ինչպես նաեւ մատուցած ծառայությունները՝ պատմիչը միտումնավոր խուսափում է Ջ դարում Սասանյան Դարսկաստանում վարչականորեն կիրառվող նույնարժեք պարսկերեն ձեւակերպումն օգտագործելուց: Կավադ Առաջինի (488-531թթ.) օրոք Դարսից տերության պետական կառավարման ոլորտում տեղի ունեցած վաչական բարեփոխումների արդյունքում «շահրերից» («աշխարհներ»)[34] կազմված առանձին մարզպանություններ, պահպանելով ներքին կառավարման համակարգը, միավորվում են չորս խմբերի մեջ եւ կազմում հավաքական վարչատարածքային նոր միավորներ՝ «քուստակներ» (երկրամաս), որոնք կառավարվում են փոխարքաների՝ «պատգոսպանների» կողմից[35]: Սեբեոսը Սմբատի պաշտոնական այս իշխանությունը ձեւակերպում է առավել վաղ շրջանի Սասանյան վարչաքաղաքական կյանքում տեղ գտած կոչումով:

Սասանյան Շապուհ Ա (242-272թթ.) տիրակալի օրոք Երանշահիի համադաշնակցային «դաստակերտ» թագավորությունների տիրակալներն իրենց անունից առաջ ունեցել են «Խոսրով» անունը[36], որով հատկանշվել է վասալ թագավորի հանգամանքը: Արքայշնորհ «Խոսրով Շում» անուն-կոչումով փաստացի բանաձեւվում է Սմբատ Բագրատունու փոխարքա կարգավիճակը, որով Խոսրով անվան հետ Սմբատի անվան համակցությունն արտահայտում է Դարսից արքունիքի կողմից տրվող պաշտոնական լիազորությունը: Սմբատ հայեցի անվան փոխարեն գործածվում է պահլավերեն (միջին պարսկերեն) Շում կամ Շումբ համարժեք տարբերակը[37]:

---

33 Նվարսակի 484 թ. պայմանագրով Մարզպանական Հայաստանում վերականգնվում են նախարարների նախկին իրավունքները, եւ քրիստոնեությունը Սասանյանների կողմից ճանաչվում է Հայաստանի պաշտոնական կրոն:

34 Առանձին քաղաքներ՝ իրենց ենթաշրջաններով:

35 ՀԺՊ, հ. 2, էջ 212-213:

36 Տե՛ս անդ, ծան. 18, էջ 25:

37 Սմբատ եւ Շում հատուկ անունների համարժեքությունը հնարավոր ենք համարում **ա < շ** եւ **ա < ու** հնչյունափոխությամբ, ըստ որի ստացվում է Սմբատ < Շ[ա]մբատ < Շումբատ < Շում[բ]: Սմբատ անվան կապակցությամբ Մովսես Խորենացին հայտնում է, որ այն ծագում է «Շամբատ» տարբերակից («Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», քննական բնագիրը Մ. Աբեղյանի եւ Ս. Հարությունյանի: Աշխարհաբար թարգմ. եւ մեկնաբ. Ստ. Մալխասյանի, Եր., 1981, էջ 236: Հետ այսու՝ ՄԽ): Շում-Սմբատ նույնանուն նշանակության

Սմբատ Բագրատունուն վարչատնտեսական բացառիկ լիազորությունների շնորհումը պայմանավորվում է Պարսկաստանի արեւելքում «Քուշանաց», այն է՝ հեփթաղների թշնամական ներկայությամբ, որոնց հնարավոր դաշնակցումը Թյուրքական խաքանության հետ մեծացնում էր արտաքին սպառնալիքը: Քաղաքական այս վտանգավորության հանգուցալուծման նպատակով Խոսրով Բ Փարվեզի կողմից Սմբատ Բագրատունուն է տրամադրվում ռազմական կանոնավոր ուժեր, որոնք նախատեսվում են ոչ այնքան Պարսկաստանի արեւելյան հեռավոր սահմանների անվտանգությունն ապահովելու, որքան ռազմական նախահարձակ առաքելություն իրականացնելու համար, ինչի մասին վկայում է պատմիչը. «Տայ նմա զփողսն չորեքձայնեանս եւ պահապանս դրան նորա ի հետեւակաց արքունի. զումարէ նմա զաւր մեծաւ ահեղութեամբ յարեւելս յերկիրն Քուշանաց»[38]:

Դեռեւս Ե դարի վերջին քառորդում Սասանյանների անհաջող պայքարը հեփթաղների դեմ Միջին Ասիայում, որի ընթացքում սպանվում է Պերոզ արքան (459-484թթ.), Պարսկաստանի համար ավարտվում է Մարվից արեւելք գտնվող տարածքների կորստով: Միայն Զ դարի երկրորդ կեսին Սասանյան Պարսկաստանին հաջողվում է հաղթանակ տանել հեփթաղների նկատմամբ՝ միավորելով ներկայիս Աֆղանստանի ողջ տարածքը եւ Միջին Ասիայի հարավային եւ հարավարեւելյան շրջանները: Այս տարածքներում, որոնք Է դարի սկզբին արդեն «Քուշանաց» տիրապետության տակ էին, Սասանյան իշխանության վերահաստատման նպատակով Սմբատ Բագրատունու գլխավորությամբ կազմակերպված ռազմական արշավանքները հանգեցնում են պատերազմների շարքի՝ հեփթաղների ու Թյուրքական խաքանության դեմ:

Ռազմական արշավանքների հաղթական ավարտն ապահովում է աշխարհագրական ընդարձակ երկրամասի ընդգրկումը Սբատ Բագրատունու իշխանության կազմում: Այս հանգամանքը որոշիչ է դառնում հաստատվող Հայ Առաքելական Եկեղեցու թեմական սահմանների ձեւավորման գործում:

Նորաստեղծ հայոց թեմը, ըստ պատմիչների, բովանդակում է արդի Միջին Ասիայի ամբողջական տարածքը՝ հարավում հարող Աֆղանստանի հյուսիսային եւ հարավ-արեւելքում՝ չինական Սինցզյան նահանգի (մինչեւ Քաշգար քաղաքը) շրջանները՝ ներառյալ Սասանյան Պարսկաստանի հյուսիսարեւելյան եւ արեւելյան՝ նախկինում կորցրած տարածքները:

Պատմական վկայությունները միանշանակ պայմանավորում են հաստատվող Հայ Առաքելական Եկեղեցու Միջին Ասիայի թեմի սահմանները Սմբատ Բագրատունու տարածքային նվաճումներով: Սեբեոսի հաղորդած մանրամասները Սմբատ Բագրատունու նվաճած տարածքների մասին վերաբերում են Մարվից արեւելք եւ հյուսիս-արեւելք պարսկապատկան եւ հեփթաղների կողմից նվաճված շրջաններին. «...արշաւեալ հասին ասպատակաւ մինչեւ ի Բահլ[39] շահապան Քուշանաց, եւ աւար հարեալ զերկիրն ամենայն, զՀա-

մասին է նաեւ վկայում «Շում[ըն]» տարբերակի առկայությունը բնագրերում (տե՛ս ծան. 117): Գ. Աբգարյանը, սակայն, համակարծիք է իր ծանոթագրությունում մեջբերած Ք. Պատկանյանի «Շում» բառի բացատրությանը. «Մականուն Սմբատայ բագմայաղթի. «Գովեստ կամ դրուատ Խոսրովու», սրուգաբանի ի լեզու պարսից» (տե՛ս **Սեբէոս,** ծան. 299, էջ 263):

38 **Սեբէոս**, էջ 101:

39 Նույն Բակտրան կամ Զարասպան է, երբեմնի Հունաբակտրիական թագավորության մայրաքաղաքը: Նույն

բեւ[40], զՎապագէս[41], զՏոխորոսպայն[42] ամենայն եւ զՏաղական[43]. առնոյր եւ զբերդս բազումս եւ զնոյնս քանդեալ աւերէր, եւ դառնայր յաղթութեամբ մեծաւ...»[44]: Այն, որ Սեբեոսի սույն հիշատակությունը վերաբերում է տարածաշրջանի կայուն նվաճմանը եւ ոչ թե ժամանակավոր արշավանքի, վկայում է նույն ինքը պատմիչը, ինչը որպես անառարկելի իրողություն հաստատվում է նաեւ հայ հեղագա պատմագրության կողմից: Սեբեոսի ներկայացրած մանրամասները միջարկվող տեղեկությունների պատճառով թեեւ հիշատակվում են երկի շարադրանքում ավելի ուշ, սակայն իրադարձությունների զարգացման, հաջորդականության ընթացքին եւ ներիմաստային ընդհանրությանը համապատասխան, նախորդում են պատմիչի նախապես կատարած սեղմ աշխարհագրորեն ճշգրտվող տեղեկությանը: Այն վերաբերում է Հայ Առաքելական Եկեղեցու թեմական վարչության հաստատմանը նախընթաց Սմբատի ձեռնարկած լուսավորական գործունեության աշխարհագրական ընդգրկմանը. «Կային յաշխարհին յանմիկ, - գրում է Սեբեոսը, - ազգն գերեալք ի Հայաստան երկրէ, եւ նստուցեալ առ ստորոտով անապատին մեծի, որ ի Թուրքաստանի եւ ի Դելիաստան կողմանէ. զլեզու իւրեանց մոռացեալ եւ դպրութիւն նուազեալք եւ կարգ քահանայութեանն պակասեալք»[45]:

Թուրանի ընդարձակ հարթավայրը, որի մասին Սեբեոսը հստակեցնում է «առ ստորոտով անապատին մեծի, որ ի Թուրքաստանի... կողմանէ» առավել մեծ տարածքային իմաստ արտահայտող տեղեկությամբ, աշխարհագրական իր ընդգրկմամբ զբաղեցնում է ներկայիս Ուզբեկստանի, Թուրքմենստանի հյուսիսարեւմտյան եւ Ղազախստանի հարավարեւմտյան հարթավայրային շրջանը, որի մեծ մասը գրավում են Կարակումի եւ Կզըլկումի անապատները: Հիմնականում ավազուտային այս տարածքն ընդգրկում է Արեւմտյան Թուրքեստանի կամ նույն Միջին Ասիայի կենտրոնական եւ հարավային մարզերն ամբողջությամբ:

Աշխարհագրական տեղեկություն պարունակող Սեբեոսի հաղորդած վկայությունը

տեղում գտնվում է ժամանակակից Բալխ գյուղը (Հյուսիսային Աֆղանստան):

40 Հարեւը նույն Հերաթն է, որ կազմել է Պարսկաստանի Արյաց երկրամասի մարզերից մեկը նույնանուն կենտրոնով: Այժմ՝ նույնանուն քաղաք Աֆղանստանի հյուսիսարեւմուտքում:

41 Պարսկաստանի Նյուշապուհ քաղաքից ոչ հեռու գտնվող գավառ: Այս գավառի անապատային վայրում 454թ. տեղի է ունեցել Ղեւոնդյանց նահատակությունը (տե՛ս ՀԺՊ, հ. 2, էջ 192):

42 Նույն Տոխարիստան կամ Տուրեստան Պարսկաստանի արեւելյան երկրամասն է, որ զբաղեցնում էր Բահլից արեւելք եւ հյուսիս-արեւելք ընկած տարածքները:

43 Սոգդիանա անտիկ ժամանակաշրջանի երկիրն է՝ Մարաքանդ կենտրոնով, որն արդի Սամարղանդն է: Նույն երկրամասում առավել վաղ ժամանակաշրջանում եղել է Հունաբակտրիական թագավորությունը՝ Բակտրա կամ Զարիասպա մայրաքաղաքով (տե՛ս ՀԺՊ, հ. 2, էջ 26, ծան. 22): Մովսես Խորենացին գործածում է «Թեգալիա» տարբերակը (տե՛ս ՄԽ, էջ 34), իսկ Եղիշեն նույն երկրամասն անվանում է «երկիրն Իպաղական» (տե՛ս **Եղիշէ**, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, աշխ. թարգմ. եւ ծան. Ե. Տեր-Մինասյանի, Եր., 1989 , էջ 36: Հետ այսու՝ **Եղիշէ**): Տեղանվան ծագման կապակցությամբ հավանական ենք համարում պատմիչների, հատկապես Սեբեոսի գործածած տարբերակի առնչությունը ժամանակակից Դղոզստանի հյուսիս-արեւմտյան եւ նրան սահմանակից Ջամբոյ քաղաքի (Ղազախստանի հարավում) մերձակա տարածքի հետ, որի աշխարհագրական ձեւակերպումը պատմականորեն կապված է Տալաս բազմանշանակ անվան հետ: Այս տարածքում է գտնվում պատմական Տալասի ընդարձակ հովիտը՝ Տալաս հնագույն քաղաքով (ժամանակակից Ջամբոյ քաղաքի տարածքում), որը հյուսիսից եզերվում է Տալասի Ալաթաու լեռնաշղթայով, եւ որի երկայնքով հոսում է Տալաս գետը: Հնարավոր ենք համարում, որ Տալաս անվան հայացված եւ միեւնույն իմաստն արտահայտող տարբերակներն են պատմիչների հիշատակած տեղանունները՝ բնորոշելով Մարաքանդից մինչեւ մերձիսսիկկուլյան ընդարձակ տարածքը, որը եւ ընդգրկել է անտիկ Սոգդիանա երկիրը:

44 **Սեբէոս**, էջ 103:

45 Անդ, էջ 97:

հաստատվում է հետագա հայ պատմագիրների կողմից: Հովհաննես Ե Դրասխանակերտցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը (898-929թթ.), ուր խոսում է Հայաստանից գերեվարված հայերի ներկայության մասին, Սմբատ Բագրատունու նվաճած այն տարածքները, անվանում է «Սագաստան»՝ նույնացնելով այն Թուրանի անապատային հարթավայրի հետ. «...ի Թուրքաստան կողմանէ մեծի անապատին, որ Սագաստան անուանի»[46]: Տեղանքի «Սագաստան» անվանումը պահպանվում է նաև Սամվել քահանա Անեցու (ԺԲ դ.) մոտ, սակայն մասնավոր գործածությամբ եւ առանձնակի նշանակությամբ. «...անդ, որ Սագաստան կոչի»[47], որը նույնությամբ կրկնում է Կիրակոս Գանձակեցին[48] (ԺԳ դ.): Աշխարհագրական նոր իմաստով է գործածում «Սագաստան» տեղանունը Մխիթար Այրիվանեցին (ԺԳ դ.), որն արդեն նույնացնում է այն Վրկան մարզի հետ. «...ի Վրկանք, որ է Սագաստան»[49]: Ժամանակագրորեն իրար հաջորդող պատմիչների այս վկայությունները, որոնք վերաբերում են պատմական միեւնույն իրողությանը, իմաստային նշանակությամբ լրացնում եւ հստակեցնում են Սեբեոսի հաղորդած տեղեկությունը: Ակնառու աղերսները, որ առկա են ավելի ուշ շրջանի պատմիչների մոտ իրենց նախորդողների տեղեկություններին, վկայում են «Սագաստան» տեղանքի ոչ թե մասնավոր նշանակության, ինչպիսին Սասանյան Պարսկաստանի Սակաստան կամ Սագաստան մարզն է (ժամանակակից Իրանի Սիստան օստանը), այլ մեկ անվան միջոցով տարբեր երկրամասերի աշխարհագրորեն հավաքական իմաստ արտահայտելու մասին: Սեբեոսի եւ հետագա հայ պատմիչների միեւնույն առիթով աշխարհագրական նույն տեղանքի հավաքական իմաստի սահմանները ճշգրտում է Ա. Ալպոյաճյանը. «Այս երկրները նախնիք կը կոչէին Սագաստան (այսօր Խօրասան, Աֆղանիստան եւ Թուրքաստան՝ մասամբ[50]) եւ Վրկանք (այսօր Մազանդարան): Եղիշէ տեղ մը[51] կ՚ընէ Քաշկարի յիշատակութիւնը, որ եթէ Թուրքաստանի համանուն քաղաքն է [52], յայտնապէս որոշուած կ՚ըլլայ այն սահմանը որ Սագաստանի կը տրուի»[53], որով, ինչպես գրում է հեղինակը, հստակեցվում են «Թուրքաստանի անապատներուն սահմանները»: Պատմիչների հիմնավորվող համաձայնությունը եւ փոխադարձ լրացումն Ա. Ալպոյաճյանի հաստատմամբ դառնում է ամբողջական, երբ «Սագաստան» ներկայացնող ժամանակակից Իրանի Խորասան օստանի, Աֆղանստանի (որի հյուսիսը նշելու համար Սեբեոսը գործածում է «ի Դելիաստան կողմանէ» արտահայտությունը) եւ Միջին Ասիայի հետ համատեղվում

46 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», աշխարհաբար թարգմ. եւ ծանոթ. Գ. Բ. Թոսունյանի, Եր., 1996, էջ 72: Հետ այսու՝ ՅԴ:

47 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ», յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, էջ 77: Հետ այսու՝ ՍԱ:

48 **Կիրակոս Գանձակեցի,** Հայոց պատմություն: Աշխարհաբ. թարգ., առաջաբ. եւ ծանոթագր. Վ. Առաքելյանի, Եր., 1982, էջ 50: Հետ այսու՝ ԿԳ:

49 Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 49: Հետ այսու՝ ՄԱ:

50 Ա. Ալպոյաճյանը «Թուրքաստան՝ մասամբ» արտահայտությունը գործածում է համարժեք Արեւմտյան Թուրքեստանի կամ Միջին Ասիայի՝ բացառությամբ ժամանակակից Ղազախստանի հյուսիսային շրջանների:

51 Տե՛ս **Եղիշէ**, էջ 378:

52 Գտնվում է Արեւելյան Թուրքեստանում, արդի Չինաստանի հյուսիս-արեւմտյան Սինցրզյան նահանգի համանուն քաղաքը:

53 **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ գաղթականութեան, Գահիրէ, 1941, հ. Ա, էջ 135, ծան. (**): Հետ այսու՝ ՊՀԳ:

է նաեւ «Վրկանք»-ը: Հետագա պատմիչների «Սագաստան» հավաքական տեղանունը ձեռք է բերում հստակ եւ մասնավոր իմաստ՝ Սեբեոսի աշխարհագրական վկայությունների հետ համեմատությամբ: «Սագաստան»-ից պատմականորեն չհաստատվող տարածքների անջատմամբ՝ հաստատվում են Սմբատ Բագրատունու իշխանությանը եւ նվաճումներին վերաբերող Սեբեոսի հաղորդած աշխարհագրական տեղեկությունները: Այսպիսով, Կասպից ծովից հարավ եւ հարավ-արեւելք ընկած մարզերը, ներառյալ Վրկան-Մազանդարանը եւ Պարթավա-Խորասանը (մինչեւ Սմբատի մեկնումը Հայաստան), ինչպես նաեւ Միջին Ասիան ամբողջությամբ՝ Աֆղանստանի հյուսիսով եւ չինական հյուսիս-արեւմտյան Սինցզյան նահանգի մի հատվածով՝ (Սմբատի վերադարձից հետո, «Քուշանաց» դեմ տարած հաղթանակի արդյունքում), ենթարկվում են Սասանյաններին ներկայացնող «Խոսրով Ծում» Սմբատ Բագրատունու իշխանությանը: Այս տարածքները որոշում են Հայ Առաքելական Եկեղեցու կայացող թեմի վարչատարածքային սահմանները Է դարի սկզբին: Այս տարածքների գերակշռող հատվածի եւ Մարգ-Մերվ քաղաքի թեմական կենտրոնի գտնվելն արդի Միջին Ասիայի սահմաններում, ինչպես նաեւ հարակից շրջանների հայ եկեղեցական համայնքների բեւեռացումն այս երկրամասում, որ դիտարկվում է արդեն Սմբատ Բագրատունու օրոք, հիմնավորում են նորաստեղծ հայ եկեղեցա-վարչական միավորի Միջին Ասիայի հայոց թեմ ձեւակերպումը:

Նորանվաճ տարածքում գերեվարված հայերի ներկայությունը, որոնց նկատմամբ Սմբատ Բագրատունու կրթական եւ կրոնաեկեղեցական հոգածությունը հանգեցնում է տարածաշրջանում արդեն ծիսական կարգավիճակով ներկա Հայ Առաքելական Եկեղեցու թեմի կայացմանը, իր նախընթաց պատճառներով առանցքային է կազմավորվող թեմի ինքնության ճշտման հարցում:

Այս ընդարձակ տարածքում մինչեւ Սմբատ Բագրատունու նվաճումը հայերի ներկայության բացատրությունն առաջինը նախաձեռնում է Ն. Մառը՝ կա՛մ Հայոց ազգային Եկեղեցու եւ կա՛մ քաղկեդոնականության պատկանելության հարցադրմամբ: Վերջինս, հարցը շաղկապելով Հայաստանում եւ Սասանյան Պարսկաստանի արեւմտյան տիրույթներում հակաքաղկեդոնական պայքարի հետ, որը բիռում էր նաեւ Սասանյան Պարսկաստանի քաղաքական շահերից, գրում է. «Պարսից արքաներն իրենք կարող էին ձեռնարկել եւ բռնի միջոցներ՝ համառ քաղկեդոնականներին Հայաստանից եւ ընդհանրապես արեւմտյան ծայրամասից տեղահանելու համար դեպի արեւելք»[54]: Իր արտահայտած այս համոզումը Ն. Մառը հիմնավորում է Հայոց Եկեղեցու, որպես ազգային կրոնական կառույց, զարգացման եւ կայացման պատմական ընթացքին չհամապատասխանող ձեւակերպմամբ. «...Զ դարում ազգային եկեղեցական ուղղությունը Հայաստանում միայն սկսում է արտահայտվել: Վրկանյան հայերը, շատ տարիներ մինչ այդ հայրենիքից տեղահանված, իհարկե, չէին էլ կարող լինել ազգային հայ եկեղեցու անդամներ»[55]: Ն. Մառի սույն համոզումն ամբողջությամբ հերքում են մի շարք իրողություններ: Է դարի սկզբին Հայաստանից հեռու՝ միջինասիական երկրամասում եւ հարակից տարածքներում, Սմբատ Բագրատունու նախաձեռնությամբ

54 **Н. Марр**, Аркаун, Монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халхедонитах. Санктпетербург, 1905, с. 48.

55 Անդ, էջ 49:

ազգային-եկեղեցական պատկանելության սկզբունքով կատարվում է տարածաշրջանի հայության համակենտրոնացում՝ լեզվի եւ դավանանքի վերականգնման եւ պահպանման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմամբ: Կազմակերպվում են ազգային-եկեղեցական համայնքային մարմիններ մեկ ընդհանուր եկեղեցավարչական համակարգում՝ թեմական կառույցում, ընդ որում՝ տարածաշրջանի այլ դավանանքի եկեղեցական վարչությունների հարեւանությամբ, եւ հաստատվում է ուղղակի ենթակայություն Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը:

Նման ազգային-եկեղեցական կյանքի կազմակերպչական հատկանիշներն անառարկելի փաստում են տարածաշրջանի հայության պատկանելությունը լիովին կայացած ազգային Հայ Առաքելական Եկեղեցուն:

Ն. Մառի բացատրությունը Միջին Ասիայում եւ հարակից շրջաններում[56] մինչեւ Սմբատ Բագրատունու նվաճումը գերեվարված հայերի ներկայության պատճառների մասին չի հիմնավորվում նաեւ պատմական փաստերով: Խարսխելով իր համոզումը Սասանյան Պարսկաստանի քաղաքական շահերի վրա, որի դրսեւորումներից էր տերության ենթակա տարբեր մասերից իրականացվող եւ հաճախակի զանգվածային բնույթ կրող բնակչության բռնի տեղահանումը եւ այլ վայրերում նրանց վերաբնակեցումը, Ն.Մառը նույնացնում է այդ շահերն իրենցից երեք տարբեր քաղաքական ոլորտներ ներկայացնող տարածքներում:

Քաղկեդոնականության խնդիրը առանձնահատուկ տարբերությամբ է ներկայանում՝ 1. Սասանյան Պարսկաստանի արեւմտյան ծայրամասում, այն է՝ պարսկապատկան Միջագետքը եւ Ասորեստանը[57], 2. Հայաստանի կամ Մեծ Հայքի բյուզանդական մասում, 3. պարսկահպատակ Մարզպանական Հայաստանում:

1. Պատմական Հայաստանի սահմաններից դուրս՝ Միջագետքում եւ Ասորեստանում, քաղկեդոնադավան առանձին հայկական համայնքների, կամ առավել եւս նման դավանանքի հայ բնակչության գոյության մասին ենթադրությունը չի հիմնավորվում պատմական փաստերով: Եթե անգամ հնարավոր համարվի նման ենթադրությունը, ապա Սասանյանների կողմից նրանց տեղահանման եւ Միջին Ասիայում կամ սահմանակից տարածքներում վերաբնակեցման մասին պատմական որեւէ վկայություն չի հաղորդվում: Բացառապես ոչ հայ քաղկեդոնադավան համայնքների կազմում քաղկեդոնական հայերը, հնարավոր է ոչ փոքրաթիվ, սակայն միայն անհատական բնույթի, այս տարածքներից տեղահանվելով, կարող էին հայտնվել Սասանյան Պարսկաստանի արեւելյան շրջաններում: Այս հանգամանքն արդեն իսկ բացառում է վերաբնակեցված վայրերում քաղկեդոնիկ-մելքիտյան եկեղեցու կայացած վարչական պայմաններում քաղկեդոնադավան հայերի՝ որպես առանձին եւ ինքնուրույն համայնքներ ներկայանալու եւ մինչեւ Սմբատ Բագրատունու նվաճումը գոյատեւելու հնարավորությունը,

բ. Հայաստանի բյուզանդական հատվածում՝ Մեծ Հայքի Բարձր Հայք եւ Ծոփք նահանգներում, ուր քաղաքական հալածանքներով քաղկեդոնականության տարածման

56 Հեղինակը հետամուտ չլինելով պատմական ընթացքով պարզաբանվող աշխարհագրական մանրամասներին՝ այս տարածքները սահմանափակում է Սասանյան Պարսկաստանի Վրկան մարզով:

57 Տիգրիսի միջին հոսանքի շրջանը, որը տարածվում էր հյուսիսարեւելքում մինչեւ Զագրոսի լեռները, հարավարեւելքում՝ Զավ գետը, արեւմուտքում՝ Միջագետքի անապատները:

աշխատանք էր տարվում, 591 թ. պարսկա-բյուզանդական դաշնագրով միայն ընդարձակվեց Մարզպանական Հայաստանի տարածքների հաշվին, եւ մինչեւ 602 թ. պարսկաբյուզանդական պատերազմի վերսկսումն այսպես հակաքաղկեդոնական սուր արտահայտվող պայմաններում է, որ Մորիկ կայսեր ջանքերով հաստատվում է քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսություն: Ե դարի կեսից սկսած՝ միայն 605 թվականին է, որ Մեծ Հայքի բյուզանդական հատվածը նվաճվում է Պարսկաստանի կողմից, ինչը բացառում է նախկինում՝ քաղկեդոնականության տարածման ժամանակահատվածում, այդ տարածքից Սասանյանների կողմից քաղկեդոնադավան հայ բնակչության բռնի տեղահանությունը: Հատկանշական է, որ քաղկեդոնականություն ընդունած հայ եպիսկոպոսների նկատմամբ Հայոց Կաթողիկոսությունը Դվինի Գ ժողովում (Ա մաս, 604թ.) ոչ թե պատժամիջոցներ է նախատեսում, ինչպիսին կարող էր լինել արտաքսումը, որի իրականացման համար կային անհրաժեշտ քաղաքական լծակներ, այլ սահմանում է կանոն՝ նրանց զղջման եւ Հայ Եկեղեցու գիրկը վերադառնալու համար[58]: Պատմական այս իրողությունը վկայում է հայ եպիսկոպոսների՝ հարկադիր պայմաններում քաղկեդոնականության ճանաչման եւ բյուզանդական կողմից դրա մեջ բռնությամբ ներքաշված լինելու մասին: Քաղկեդոնիկ Հովհան Կաթողիկոսի գերեվարումով Պարսկաստան (608թ)[59], եթե անգամ ենթադրվի քաղկեդոնադավան հայ բնակչության որոշ զանգվածի տեղահանությունը Սասանյան տերության արեւելյան ծայրամասեր, ապա կարճ ժամանակի պատճառով չի կարող համապատասխանել Սեբեոսի «զլեզու իւրեանց մոռացեալ» որակմանը, որը բավական երկար ժամանակային վաղեմություն է ենթադրում,

3. Մարզպանական Հայաստանում սկսած Ե դարի վերջից պայքար է սկսվում քաղկեդոնականության դեմ, որի նկատմամբ Հայ Առաքելական Եկեղեցու, ինչպես նաեւ Վրաց եւ Աղվանից Եկեղեցիների դատապարտող վերաբերմունքը ձեւակերպվում է Դվինի Ա Ժողովում 506 թվականին[60]: Այն հատկանիշը, որով բնորոշվում է քաղկեդոնականության տարածման միջոցը Մարզպանական Հայաստանում, ճշգրտում է Հայ Առաքելական Եկեղեցու հակա-քաղկեդոնական պայքարի նպատակառուղղվածությունը: Միանշանակ դրսից, այն է՝ Բյուզանդական կայսրության կողմից կազմակերպված վարչաքաղաքական միջոցներով քաղկեդոնականության տարածման, բայց ոչ երբեք քաղկեդոնականությամբ համակված հայ եկեղեցականների եւ կամ ազգաբնակչության որեւէ զանգվածի դեմ է, որ ծավալում է Հայ Առաքելական Եկեղեցին իր հակաքաղկեդոնական պայքարը: Իր ազգային-եկեղեցական ամբողջականության դեմ ուղղված արտաքին ոտնձգությունը կասեցնելու գերխնդիրն է լուծում Հայ Առաքելական Եկեղեցին հակաքաղկեդոնիկ իր կեցվածքով: Այսպես կանխարգելվում է ներազգային եկեղեցական կյանքին սպառնացող պառակտումը: Այս ուղղությամբ քայլեր են ձեռնարկվում առանձին դեպքերում մոլորության մեջ ընկած անհատների զղջման ու դարձի համար: Նման իրողությունը բացառում է հայ քաղկեդոնականության՝ որպես կայացած եւ հավաքական երեւույթի առկայությունը Մարզպանական Հայաստանի վարչական սահմաններում:

---

58 Տեմ **Եզնիկ քհն. Պետրոսյան,** Հայ Եկեղեցու Պատմություն,մաս Ա, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 1990, էջ 58: Հետ այսու՝ ՀԵՊ:

59 Տեմ անդ, էջ 57:

60 Տեմ անդ, էջ 49-50:

Այսպիսով՝ Ն. Մառի առաջադրած վարկածը դառնում է անընդունելի երկու հիմնական պատճառներով: Մինչև 591 թվականը Մարզպանական Հայաստանն իր վարչատարածքային ամբողջական ընդգրկմամբ որակվում է հակաքաղկեդոնիկ հավաքական հատկանիշով: Չկա պատմական որևէ վկայության՝ Սասանյանների կողմից հայ քաղկեդոնադավան ազգային զանգվածի տեղահանման մասին:

Սասանյան Պարսկաստանի վարած քաղաքականությունը նվաճված Մեծ Հայքի, իսկ 428 թվականից սկսած Մարզպանական Հայաստանի նկատմամբ փաստում է Արևելքում գերեվարված հայերի Հայ ազգային Եկեղեցուն պատկանելու մասին: Հայ բնակչության տեղահանումը և Պարսկաստանի ծայրամասերում վերաբնակեցումը Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո սպանում է կազմակերպված և ծրագրային նշանակություն: Այն դառնում է նախ Մեծ Հայքի թագավորության, ապա նաև Մարզպանական Հայաստանի նկատմամբ վարած Պարսից պետական քաղաքականության հիմնական դրսևորումներից մեկը: Սասանյանների օրոք Հայաստանից բնակչության լայնածավալ տեղահանությունը 369 թվականին առաջինն իրականացնում է Շապուհ Բ-ը (309-379թթ.)՝ վերաբնակեցնելով հայերին մասամբ Ասորեստանի, մասամբ Խուժաստանի[61] քաղաքներում[62]: Սասանյան հետագա տիրակալների օրոք՝ Հազկերտ Բ (439-457թթ.), Պերոզ (459-484թթ.) և Խոսրով Բ Փարվեզ (591-628թթ.)՝ Սմբատ Բագրատունու իշխանության ներքո եղող տարածքներում Հայ Առաքելական Եկեղեցու թեմի սկզբնավորման նախօրյակին, կազմակերպվող տեղահանումները վերաբերում են առավելաբար Մարզպանական Հայաստանի զինվորականությանը: Սակայն դրանք զանգվածային լինելով՝ ներառում են ամբողջական նախարարական տներ և ոչ սակավ հոգևորականություն[63]: Այս հավաքականությունը թե՛ Սեբեոսը և թե՛ հետագա պատմիչները որակում են «ազգ» ձևակերպմամբ[64]: Այս տեղահանությունների նպատակի իրատեսական բացատրությունը տալիս է Ա. Ալպոյաճյանը: Նա երևույթը Սասանյան Պարսկաստանի քաղաքական շահերի տեսանկյունից գնահատում է «թէ՛ Հայաստանը դատարկացնելով տկարացնելու և թէ՛ պետութեան սահմանագլուխները ամրացնելու կրկնակ դիտումներով»[65]: Այս տեղահանումները, որոնք կատարվում էին դեպի միջինասիական ռազմատենչ ցեղերին սահմանակից Սասանյան Պարսկաստանի արևելյան մարզեր, թեև ժամանակավոր պետական նպատակների էին կոչված ծառայելու, այնուամենայնիվ, մի քանի պատճառներով վերածվում էին մասնակի վերաբնակեցման: Սեբեոսի հիշատակությունը Սմբատ Բագրատունու նվաճած տարածքներում գտնվող հայերի մասին որպես «գերեալք ի Հայաստան երկրէ», մեկնաբանվում է ո՛չ միայն Սասանյանների կողմից հատկապես Հայաստանից գերեվարված լինելու իմաստով, ինչը և միակողմանի ներկայացնում է Ն. Մառը: Այն արտահայտում է բռնության զործադրմամբ տվյալ վայրերում նրանց հարկադիր վերաբնակեցում: Այս իմաստով են գործածվում

61 Պարսից ծոցի հարավային ափին հարող Սասանյան Պարսկաստանի մարզ: Համապատասխանում է արդի Իրանի Խուժեստան օստանին:

62 **Ն. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մ. Ա, Եր., 1957, էջ 200: Հետ այսու՝ ՔՏՀԺՊ:

63 Տես ՀԺՊ, հ. 2, էջ 169-170, 193:

64 Տես ՅԴ, էջ 72 և ՍԱ, էջ 77:

65 ՊՀԳ, 1941, հ. Ա, էջ 135:

Սեբեոսի «նստուցեալ», իսկ Հովհաննես Ե Դրասխանակերտցի Կաթողիկոսի «բնակեցուցեալս»[66] որակումները: Դեպի արևելյան սահմաններ այսպիսի տեղահանությունները հայերի համար վերածվում էին վերաբնակեցման, հատկապես Սասանյանների կողմից տեղում ստեղծված այն պայմաններում, որոնք անհնարին էին դարձնում որևէ տեղաշարժ և մանավանդ բացառում վերադարձը հայրենիք, ինչի մասին տակավին Ե դարի երկրորդ կեսին վկայում է Եղիշեն[67]: «Գերեալք» որակումը, առանց հերքելու այս երկու նշանակությունները, լրացուցիչ իմաստ է ձեռք բերում Սասանյանների կողմից պարտադրված տարբեր պատճառներով այդ տարածքներում գտնվող հայերի՝ հատկապես հեփթաղների եւ Թ-յուրքական խաքանության կողմից գերեվարված լինելու հնարավորությամբ: Մինչեւ Սմբատ Բագրատունու իշխանության հաստատումը միջինասիական եւ Սասանյան Պարսկաստանից արեւելք ընկած տարածքներում բացառապես հեփթաղների եւ Թ-յուրքական խաքանության կողմից գերեվարված լինելու հստակ իմաստով է հաղորդվում Սամվել քահանա Անեցու «...գերեալս ի հայոց անդ...»[68] պատմական տեղեկությունը, ինչն իմաստային տեսակետից առավել համապատասխանում է Սեբեոսի վկայություններին: Այս իմաստով հեփթաղների եւ Թ-յուրքական խաքանության իշխանության ներքո գտնվող տարածքներում հայերի գերեվարության հատկանիշներն են սկսում դիտարկվել Սեբեոսի հաղորդած «զլեզու իւրեանց մոռացեալ եւ դպրութիւն նուազեալք եւ կարգ քահանայութեան պակասեալք» մանրամասները: «Գերեալք» կարգավիճակը հաստատող ազգային եւ կրոնական ազատությունների սահմանափակված պայմաններում, զրկված որեւէ ռազմական հնարավորությունից, այս տարածքներում «նստուցեալ» հայերը կարող էին ծառայել ռազմական բախումներով հարուստ Սասանյանների եւ արեւելյան ցեղային միությունների, հատկապես հեփթաղների միջեւ՝ որպես լարված հարաբերությունների մեղմացման գոտի:

Կարեւորագույն խնդիրը, որի մասին տեղեկություններ են հաղորդում հայ մատենագիրները, վերաբերում է միջինասիական երկրամասում Հայ Առաքելական Եկեղեցու թեմի հիմնադրմանը: Սեբեոսը հայտնում է. «Կային անդ եւ ազգ Կոդրեացն, որք գերեցան մերովք արամբք: Կային անդ եւ յիշխանութենէն Յունաց եւ յԱսորւոց կողմանէ ոչ սակաւք: Էին ազգ Կոդրեացն անհաւատք. բայց ի վերայ քրիստոնէից ծագէր լոյս մէծ. հաստատէին ի հաւատս եւ ուսանէին զդպրութիւն եւ զլեզու. եւ հաստատէին ի կարգ քահանայութեան յաշխարհի անդ երեց ոմն ի նոցանէ, որ անուանեալ կոչէր Աբէլ»[69]:

Հաստատված խաղաղության եւ կայունության պայմաններում Սասանյան իշխանության ներկայացուցիչ Սմբատ Բագրատունին շարունակում է տակավին մարզպանի կարգավիճակում սկսած շինարարական գործունեությունը: Մարզպանություն-տանուտիրության տարածքում պետական նշանակության ոլորտների՝ պաշտպանական կառույցների, վարչակառավարման մարմինների, բնակավայրերի եւ տնտեսության վերականգնման անհրաժեշտ աշխատանքների մասին հավաքական կերպով հաղորդում է Սեբեոսը. «...շինեալ հաստատէր զամենայն երկիրն իւրոյ մարզպանութեանն, քանզի էր երկիրն աւերակ»[70]: Սույն

66 ՅԴ, էջ 72:
67 **Եղիշէ**, էջ 38:
68 ՍԱ, էջ 77:
69 **Սեբէոս**, էջ 97:
70 Անդ, էջ 96:

վկայությունը, ինչպես նշվեց վերեւում, վերաբերում է Սմբատի՝ Հայաստան այցելության թե՛ նախորդող, թե՛ հատկապես հաջորդող շրջանին: Զուգահեռ իրականացվում է պետական քաղաքականություն հեփթաղների եւ Թյուրքական խաքանության կողմից գերեվարված ազգային-կրոնական, հատկապես քրիստոնեական տարբեր համայնքների նկատմամբ: Բավարար պետական միջոցներ տնօրինող «Խոսրով Շում» Սմբատի ձեռնարկած գործունեությունն այս ուղղությամբ հատկանշվում է գլխավորապես կրոնակրթական լուսավորչությամբ, համայնքային կյանքի կազմակերպմամբ եւ բացառիկ դեպքերում՝ համայնքների համակենտրոնացմամբ: Նման գործունեությունը հանգեցնում է որոշակի ազգային-կրոնական հատկանիշով, ինչպես փաստվում է հայերի օրինակով, իր ժամանակի համար քիչ թե շատ խոշոր բնակավայրի ստեղծման:

Սմբատի այսօրինակ կառուցողական գործունեությունը հիմնականում վերաբերում է տարածաշրջանում գերեվարված ազգային պատկանելությամբ եւ դավանանքով տարբեր քրիստոնեական համայնքներին: Այս առիթով Ն. Մառի ենթադրությունը, թե «Սեբեոսի շարադրանքում կարեւոր է այն, որ նա խոսում է Հայաստանից տեղահանված հայերի մասին քրիստոնյա-վերաբնակեցվածների հետ՝ հունական իշխանության սահմաններից եւ ասորական կողմից. եղել են այդ քրիստոնյաները նույնպես հայեր, թե հույներ եւ ասորիներ, նշանակություն չունի, առավել բնական է ենթադրել, որ խոսքը միեւնույն քրիստոնեական եկեղեցու մասին է...»[71], հիմնավորում չի գտնում թե՛ պատմիչի վկայությամբ եւ թե՛ նույն իր՝ հեղինակի օգտագործած պատմական իրողություններով:

Սեբեոսի ոճական առնձնահատկությունն է՝ աշխարհագրական տեղեկությամբ մատնանշել ազգությունը եւ իմաստային խմբավորման սկզբունքով կառուցել պատմության շարադրանքը: Այս հանգամանքը թույլ է տալիս հստակ զատորոշելու հայերի եւ «յիշխանութենէ Յունաց եւ յԱսորոց կողմանէ ոչ սակաւք» ներկայացուցիչների ազգային պատկանելությունը: Սեբեոսը հստակորեն կարեւորում է իր շարադրանքում հայերին վերաբերող տեղեկությունները: Նա Սմբատի կատարած համընդհանուր գործունեության հիմքի վրա է միայն ներկայացնում հարակից մանրամասները, սակայն բացառապես կողմնակի եւ լրացուցիչ նշանակությամբ: Պատմական այս շրջանի ազգային-դավանական խնդրի վերաբերյալ Ն. Մառի կատարած պարզաբանումը, որ «...ազգային անվանումները այստեղ հաճախ դավանական են ծառայել, ինչպես հատկապես «հունականը»... քաղկեդոնիկ նշանակությամբ»[72], հերքում է իր իսկ արտահայտած «միեւնույն քրիստոնեական եկեղեցու մասին» ենթադրությունը: Սակայն Ն. Մառի կատարած պարզաբանումը պատմական ճշգրտություն է հաղորդում Սեբեոսի տեղեկություններին: Ըստ այդմ, հավատքի սկզբունքով մեկուսի ներկայացված Կողդրյացիների հետ հիշատակվող «յիշխանութենէն Յունաց»-ը Սեբեոսը գործածում է առավելաբար դավանական առանձնահատկությունը, այս դեպքում՝ քաղկեդոնադավանությունը նշելու համար: Պատմական այն իրողությունը, որ Զ-Ը դարերում Թյուրքական խաքանությունը կրում էր նեստորականության զգալի ազդեցություն, եւ քրիստոնեության այս ուղղությունն այստեղ վայելում էր որոշակի ազատություն, ապա «յԱսոր-

71 **Н. Марр**, Аркаун, Монгольское название христиан, с. 49-50.
72 Անդ, էջ 52:

ւոց կողմանէ»[73] գերեվարվածները ներկայանում են բացառապես Բյուզանդիայի արեւելյան շրջաններից արտաքսված ասորի միաբնակներ: Սեբեոսի «ի վերայ քրիստոնէիցն ծագէր լոյս մեծ» արտահայտությունը այս դեպքում համահավաք բնութագրումն է Սմբատի գործունեության ընդհանուր արդյունքի: Պատմիչն արձանագրում է քաղկեդոնականների, միաբնակների եւ հայերի համար արգելված ազգային-կրոնական ազատությունների վերականգնման փաստը:

Սասանյանների կողմից հարկադիր միջոցներով մշտապես համալրված եւ հեփթաղների ու Թյուրքական խաքանության կողմից գերեվարված հայերի քանակը Սեբեոսը հայտնում է անուղղակի: Այլադավան քրիստոնյաների «ոչ սակաւք» քանակային որակմամբ, Սեբեոսը համեմատության միջոցով արտահայտում է հայերի քանակային հավասարությունը կամ գերազանցությունը :

Հավատքի մեջ հաստատման, դպրության եւ լեզվի ուսուցման մասին Սեբեոսի, ինչպես նաեւ հետագա պատմիչների հաղորդած մանրամասները վերաբերում են բացառապես հայերին: Այս գործընթացը որքանով համարվում է Սմբատ Բագրատունու կողմից ձեռնարկման եւ իրականացման արդյունք, ինչի մասին միանշանակ հայտնում է Սամվել քահանա Անեցին «նորոգեալ Սմբատայ»[74] արտահայտությամբ, նույնքան եւ տարածաշրջանում արդեն հաստատված Հայ Առաքելական Եկեղեցու գործառույթ է, որի իրականացման ընթացքում ձեւավորվող թեմական վարչության կարեւորությունը շեշտելու համար Սեբեոսն այդ մասին տեղեկությունը հայտնում է իր շարադրանքի վերջում: Սմբատ Բագրատունու ընձեռած հնարավորության պայմաններում, սակայն բացառապես կազմավորվող Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր-եկեղեցական վարչության այդ ուղղությամբ տարվող աշխատանքի մասին է վկայում Հովհաննես Ե Դրասխանակերտցի Կաթողիկոսը. «...ի հրամանէ նորուն [Սմբատի-**Վ.ա.Ղ.**] դարձեալ աշակերտեալ ըստ հայերէն հագագացս սիղոբայիցն զլեզուն նորոգէին. եւ ուսեալ զդպրություն հայերէն՝ հաստատէին ի հաւատս»[75]: Այն, որ Դ դարի երկրորդ կեսից, համաձայն Աշտիշատի առաջին Հայոց ազգային-եկեղեցական ժողովի որոշման, ազգային-հոգեւոր կրթությունը Հայ Առաքելական Եկեղեցու կողմից իրականացվում էր վանքերում[76], վկայում է տարածաշրջանում հայկական վանքերի եւ նրանցում գործող դպրոցների առկայության մասին: Բացառապես հայ ազգային-եկեղեցական կրթության մասին է վկայում ոչ միայն ազգային լեզվի, այլ նաեւ հայերենով դպրության ուսուցումը, այն է՝ ամբողջական հայ ազգային-եկեղեցական հավատուսուցումը:

Ազգային-եկեղեցական կրթության ծավալուն աշխատանքը, որ խոսում է տարածաշրջանի հայերի հավաքական կյանքում Սմբատ Բագրատունու կատարած կազմակերպչական աշխատանքի մասին, հանգեցնում է թեմական վարչության ձեւավորման եւ եպիսկոպոսի ձեռնադրության անհրաժեշտության: Հայ Առաքելական Եկեղեցու թեմի հաստատումը Պարսից տերությունից արեւելք ընկած միջինասիական տարածաշրջանում դառնում է Սմբատ Բագրատունու ազգային-եկեղեցական նվիրվածության եւ Սասանյանների քաղա-

73 Միջերկրական ծովից հյուսիս-արեւելք ընկած բյուզանդապատկան տարածքները:
74 ՍԱ, էջ 77:
75 ՅԴ, էջ 72:
76 Տե՛ս ՀԵՊ, էջ 30:

քականության արդյունք: Շնորհիվ Սմբատ Բագրատունու՝ Պարսից պետական շահերը ոչ միայն չեն հակասում, այլև նպաստում են տարածաշրջանի հայ ազգային-եկեղեցական կազմակերպության զարգացմանը: Սասանյանների փորձերի նպատակն էր Հայաստանից տեղահանումների եւ միջինասիական սահմաններում վերաբնակեցման միջոցով պատնեշել արեւելյան ռազմատենչ ցեղերի ներխուժումների առջեւ: Ազգային-եկեղեցական ազատությունները, հատկապես Հայ Առաքելական Եկեղեցու թեմի հիմնումը կապահովեր տարածաշրջանում հայերի մնայուն ներկայությունը եւ նրանց համակրանքը Պարսից իշխանությունների նկատմամբ: Կամբապնդվեին Սասանյանների քաղաքական շահերը տեղի քաղկեդոնական-մելքիտների եւ նեստորականների եկեղեցական կազմակերպված համայնքների շրջանակում հավասար դիրքերից ներկայացող Հայոց Եկեղեցու միջոցով:

Այս նպատակի իրականացման տեսանկյունից է գնահատվում նաեւ Սմբատ Բագրատունու ձեռնարկած՝ հայերի համակենտրոնացումը, որը հանգեցնում է ժամանակի պահանջներին համապատասխան հայկական բնակչությամբ ոչ մեծ չափերի հասնող քաղաքի ձեւավորմանը: Այս առնչությամբ, ներկայացնելով «Քուշանաց» դեմ Սմբատ Բագրատունու արշավանքը՝ կապված միջինասիական տարածաշրջանի պատմության հարցերին, ակադեմիական հրատարակության «Ուզբեկական ՍՍՀ-ի Պատմություն»-ում ասվում է. «...կան եւ այլ տվյալներ, առայժմ պատմագիտության կողմից շատ քիչ գործածվող. դրանք տեղեկություններ են այն մասին, որ քուշանների երկիր արշավանքի ժամանակ հիմնվել է հայկական քաղաք»[77]: Ակնարկվող տվյալները վերաբերում են 1953-54 թվականներին Ղրղզստանի Չուի հարթավայրում հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված եկեղեցական կառույցին: Ժամանակակից Ակ-Բեշիմ բնակավայրի սահմաններում պեղումների արդյունքում ի հայտ եկած եւ Է-Ը դարերում գործած, փաստացի հայկական՝ Հայ Առաքելական եկեղեցական կառույցն իր բոլոր հատկանիշներով ուղղակի վերաբերում է «Խոսրով Շում» Սմբատ Բագրատունու միջինասիական տարածաշրջանի կառավարման ժամանակաշրջանին: Այս հանգամանքը վկայում է Միջին Ասիայի հայ ազգային-եկեղեցական հավաքական կյանքում առանձին խոշոր հատվածի համատեղ եւ միատարր բնակության կազմակերպման մասին: Տարածաշրջանում նմանօրինակ հայկական համայնքի ազգային-եկեղեցական հատկանիշով համակենտրոնացված ոչ փոքր հատվածը մեկուսի բնակավայրի կազմակերպման պայմաններում արդեն իսկ ժամանակի պահանջներով լիովին կարող էր համարվել հայկական քաղաք: Այսպես՝ պատմագիտական առկա փաստերի համաձայն՝ հայաշատ մերձիսսիկկուլյան շրջանում Ակ-Բեշիմի եկեղեցին կարող է լիարժեք դիտարկվել որպես միատարր հայկական բնակավայրի պատմական վկայություն:

Սակայն բազմազգ եւ քրիստոնեական այլ ուղղությունների ներկայության պայմաններում նմանօրինակ բնակավայրը կարճ ժամանակ անց արդեն կարող էր ենթարկվել ազգագրական փոփոխության՝ կորցնելով ազգային-եկեղեցական միատարր դիմագիծը:

Սմբատ Բագրատունու կողմից Միջին Ասիայի հայոց թեմի կազմում քիչ թե շատ մեծ հայկական միատարր բնակավայրի կազմակերպման խնդիրն անառարկելի շահեկան է դիտվում Սասանյանների քաղաքական շահերի տեսանկյունից: Նմանօրինակ բնակավայրն այստեղ հաճախակի կրկնվող պատերազմական պայմաններում ձեռք է բերում կա-

77 "История Узбекской ССР", т. I, книга первая. Ташкент, 1955, с. 104, 105.

բեւոր եւ մեծ նշանակություն՝ որպես սահմանամերձ պատվար՝ վաչկատուն եւ ռազմատենչ ցեղերի հաճախակի կրկնվող հարձակումների առջեւ:

Սմբատ Բագրատունու կառուցողական գործունեության արդյունքում հատվածաբար կազմակերպվող եւ ընդարձակվող հայ եկեղեցական-համայնքային կյանքն ըստ էության հանգում է վարչակազմակերպչական ամբողջական կառույցի անհրաժեշտության: Այդպիսին է տարածաշրջանի Հայ Առաքելական Եկեղեցու թեմի հիմնումը եւ թեմական եպիսկոպոսի ձեռնադրությունը: Այս մասին Սեբեոսի հաղորդած վկայությունն առավել պարզորոշ հաստատում է Սամվել քահանա Անեցին. «...զՀաբէլ[78] ոմն եպիսկոպոս տայ [Սմբատ Բագրատունին-**Վ.ա.Ղ.**] ձեռնադրել կաթուղիկոսին Հայոց, եւ կացոյց ի վիճակ աթոռոյ Ս. Գրիգորի»[79]: Պետք է հաստատել, որ Սեբեոսի «հաստատէին ի կարգ քահանայութեան յաշխարհի անդ երէց ոմն ի նոցանէ, որ անուանեալ կոչէր Աբէլ» արտահայտությունն իր ժամանակի համար (Է դարի երկրորդ կես) ընկալելի էր նույն նշանակությամբ, ինչն իրենց ժամանակի համար պարզորոշ եւ մանրամասնությամբ ներկայացնում են հետագա հայ պատմիչները: «Ի կարգ քահանայութեան» արտահայտությամբ Սեբեոսը հայտնում է արդեն երեց՝ այն է քահանայության աստիճան ունեցող Աբելի կողմից առավել բարձր եւ անմիջապես հաջորդող հոգեւոր-եկեղեցական աստիճանի ստանձնումը, ինչպիսին է եպիսկոպոսական ձեռնադրությունը, որով հայոց թեմի առկայությունը դառնում է անառարկելի իրողություն եւ ըստ պատմիչի՝ առանձին մանրամասնման համար ավելորդ: Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր-եկեղեցական աստիճանակարգում երեց-քահանայի աստիճանին անմիջապես հաջորդող եպիսկոպոսության կարգի մասին են վկայում Աբրահամ Ա Աղբաթանեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալման սկզբում (608 թ.) հաստատված Եկեղեցու ինը դասերի կարգը եւ մինչեւ այդ կիրառվող ավանդական աստիճանակարգը[80]: Երեց Աբելի միայն եպիսկոպոսացմամբ կարելի է բացատրել նրա հոգեւոր ընդգրկուն ծառայությունը «յաշխարհի անդ», որն իրենից ներկայացնում էր ընդարձակ մի երկրամաս: Այն, ինչ անուղղակի ներկայացնում է Սեբեոսը, պարզաբանում են հետագա հայ պատմիչները՝ ճշգրտելով թե՛ հայ հոգեւոր-եկեղեցական վարչությունը որպես «վիճակ մեծի աթոռոյ Սրբոյն Գրիգորի»[81] եւ թե՛ «ի կարգ քահանայութեան» հաստատվող Աբելին՝ որպես եպիսկոպոս:

Հայոց թեմի հիմնման հարցում, կարեւորելով Պարսից պետական իշխանության ներկայացուցիչ Սմբատ Բագրատունու մասնակցության վճռական նշանակությունը, հայ պատմիչները տարբեր շեշտադրմամբ են ներկայացնում Աբելի եպիսկոպոսական ձեռնադրության հանգամանքները: Մխիթար Այրիվանեցին ուղղակի ասում է, որ Սմբատ Բագրատունին «կարգէ եպիսկոպոս նոցա զՀաբէլ»[82], իսկ Հովհաննես Ե Դրասխանակերտցի Կաթողիկոսը՝ «զերէց ոմն ի նոցունց իսկ՝ Աբէլ անուն, եպիսկոպոս նոցա հրամայէ կացուցանել

78 Սեբեոսը, Հովհաննես Ե Դրասխանակերտցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը գործածում են Աբել անունը, իսկ Սամվել քահանա Անեցին, Մխիթար Այրիվանեցին եւ Կիրակոս Գանձակեցին՝ Հաբել: Հիմք ընդունելով Սեբեոսի հիշատակությունը որպես հնագույն՝ մեր շարադրանքում, բացառյալ բնագրային մեջբերումները, գործածում ենք միայն Աբել տարբերակը:

79 ՍԱ, էջ 77:

80 **Ստեփանոս Օրբելյան,** Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. եւ ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի, Եր., 1986, էջ 131-134 (հետ այսու՝ ՍՕ): Նաեւ տե՛ս «Ազգապատում», Ա հ., §§ 429, 430, 432:

81 ՅԴ, էջ 72:

82 ՄԱ, էջ 49:

մեծի հայրապետին մերոյ Մովսէսի»[83]: Եթե «կարգէ»-ի միջոցով Սամվել քահանա Անեցին մատնանշում է միայն Սմբատի ի պաշտոնե միջամտության մասին եւ ակնարկում, որ եպիսկոպոսական ձեռնադրությունը Դարսից տերության քաղաքականության արդյունք է, ապա Հովհաննես Ե Դրասխանակերտցի Կաթողիկոսն այս իմաստներից բացի «հրամայէ»-ով կարեւորում է երեց Աբելի «ի նոցունց իսկ» լինելու հանգամանքը եւ հաստատում Սեբեոսի նույն վկայությունը: Այս որակմամբ հստակ է դառնում, որ եպիսկոպոսության համար ընտրվող երեց Աբելը տարածաշրջանում գերեվարված հայերից է եւ որպես երեց գտնվել է այստեղ ոչ շատ վաղ, առավելագունը Սմբատի մարզպանական իշխանության շրջանից: Տակավին այդ շրջանում Մարգ-Մերվում գործող եկեղեցու՝ «զոր ունէին երիցունք դրան նորա», հոգեւոր սպասավորները, գործող բանակի հետ մասնակցելով մարտական գործողություններին, Սմբատի անհաջող ելույթների ժամանակ[84] կարող էին գերեվարվել հեփթաղների կամ Թ-յուրքական խաքանության կողմից եւ բնակեցվել գերիների համար նախատեսված վերոհիշյալ վայրերում: Այսպիսով, անուղղակի կերպով թե՛ Սեբեոսի, թե՛ նրան հաջորդող եւ այս հարցը լուսաբանող պատմիչների կողմից պատասխան է տրվում տարածաշրջանի նորահաստատ Հայ Առաքելական Եկեղեցու թեմի՝ «աթոռոյ Ս. Գրիգորի» վիճակի վարչական կենտրոնի, այն է՝ եպիսկոպոսական նստավայրի մասին: Սասանյան Դարսկաստանի միջինասիական երկրամասում գտնվող Մարգ-Մերվ ամրացված քաղաքը, որպես Սմբատի նստավայր՝ վարչական իր հնարավորություններով եւ նվաճված տարածքներում կենտրոնական դիրքով, հատկապես իր գործող հայ եկեղեցիով եւ նույն եկեղեցու երեցի եպիսկոպոսացմամբ, դառնում է հաստատվող Հայ Առաքելական Եկեղեցու թեմի կենտրոնը:

Երեց Աբելի եպիսկոպոսական ձեռնադրության առիթով, որը պետք է տեղի ունենար առնվազն 608 թվականից հետո, Հովհաննես Ե Դրասխանակերտցի Կաթողիկոսի կողմից հիշատակվող Մովսես Բ Եղիվարդեցի Կաթողիկոսը, որի գահակալման տարիներն են 574-604 թվականները, չէր կարող հանդիսանալ օրվա Կաթողիկոս: Դրասխանակերտցու հիշատակությունը պատմական անճշտություն պետք է համարել այն պատճառով, որ նա հիմնվում է Սեբեոսի «Պատմության» վրա՝ առանց առարկայի ընդհանուր վերլուծության: Պատմական անհամատեղելիության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ Սեբեոսն իրեն հատուկ ընդհանրացման միջոցով «մարզպանութիւն» անվան տակ առանց զանազանելու ներկայացնում է Սմբատի՝ Հայաստան այցելության թե՛ նախորդող, թե՛ հաջորդող ժամանակահատվածները, իսկ ժամանակային առումով ճշգրտում է միայն նախորդող՝ 599-607 թվականների շրջանը: Հիմք ընդունելով այս ժամանակաշրջանը՝ Դրասխանակերտցին եզրահանգում է Մովսես Բ Եղիվարդեցի Կաթողիկոսի տարբերակին: Սակայն, հիմք ընդունելով Սեբեոսի վկայությունների ամբողջական իմաստային պարզաբանումները՝ ենթադրելի է, որ եպիսկոպոսական ձեռնադրությունը տեղի է ունեցել Հայաստանից Սմբատի վերադարձից հետո, այսինքն՝ 608 թ. գարնանը հաջորդող ժամանակահատվածում: Ըստ այդմ՝ երեց Աբելի եպիսկոպոսական ձեռնադրությունը կաթողիկոսանիստ Դվինում կատարում է Սմբատի անմիջական մասնակցությամբ ընտրված Աբրահամ Ա Աղբաթանեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը (607-615 թթ.):

83 ՅԴ, էջ 72:
84 Տես **Սեբէոս**, էջ 97-98:

Այսպիսով, Սմբատ Բագրատունու ստանձնած բացառիկ լիազորությունները եւ կարգավիճակը լիովին արդարացվում են Խոսրով Բ Փարվեզի կողմից առաջադրված ռազմավարչական նպատակների իրականացմամբ: Հաղթական ավարտով ռազմական արշավանքների արդյունքում վերադարձվում են ոչ միայն կորսված արեւելյան մարզերը, այլ նաեւ հաստատվում է Սասանյան Դարսկաստանի գերիշխանությունը Միջին Ասիայում եւ հարակից շրջաններում: Իրականացվում է կառուցողական-կազմակերպչական հստակ քաղաքականություն՝ նվաճված տարածքներում Սասանյանների դիրքի ամրապնդման համար:

«Յայնժամ հրեշտակք աւետաւորք վտութով հասանէին առ արքայն Խոսրով, լիով զեղեալսն պատմէին քաջութիւն: Իսկ արքայն Խոսրով, - գրում է Սեբեոսը Արեւելքում Սմբատի պաշտոնավարման ավարտի եւ Դարսից արքունիք վերադարձի մասին, - զուարճանայր զուարթանայր մեծաւ խնդութեամբ... եւ գրէր առ նա հրովարտակ մեծապէս գոհութեամբ. եւ կոչէր զնա ի դուռն մեծաւ պատուով եւ շքեղութեամբ»[85]:

«Խոսրով Շում» Սմբատ Բագրատունու պաշտոնավարման տեւողության վերաբերյալ, որով կճշտվեր տարածաշրջանում Հայ Առաքելական Եկեղեցու թեմի հիմնման ժամանակը, ուղղակի տեղեկություններ չեն հաղորդվում: Սեբեոսը ճշտում է միայն մինչեւ Հայաստան այցելություն 599-607 թվականներին վերաբերող Սմբատի մարզպանության շուրջ 8-ամյա ժամանակաշրջանը: Նա հայտնում է նաեւ մահվան տարեթիվը[86], որն ընդունված է համարել 617 թվականը[87] եւ լրացուցիչ մանրամասներ, որոնցով հնարավոր է դառնում ենթադրել Հայաստանից վերադառնալուց հետո պաշտոնավարման մոտավոր տեւողությունը:

Սեբեոսի շարադրանքում Սմբատի հաղթական արշավանքների ավարտին անմիջապես հաջորդում է եր կանչման մասին արքայական հրովարտակի հիշատակումը: Այստեղ ակնհայտ շտապողականություն է նկատվում լրատարների գործողություններում եւ Խոսրովի որոշում կայացնելու մեջ: Այս հանգամանքը հիմք է դառնում Մաղաքիա արք. Օրմանյանի համար պաշտոնակատարման տվյալ շրջանը սահմանափակել մեկամյա տեւողությամբ (608-609 թթ.), իսկ մինչեւ մահվան տարեթիվն ընդգրկող 8 տարիները հատկացնել Դարսից արքունիքում ծառայության ժամանակաշրջանին[88]: Սակայն այս ժամանակագրական եզրահանգումը նվազ համոզիչ է դառնում Սեբեոսի լրացուցիչ տեղեկությունների լուսաբանմամբ: Սեբեոսն Արեւելքից Սմբատի վերադարձից հետո ժամանակահատվածի համար գրում է. **«Եւ էր նա երրորդ նախարար ի տաճարի թագաւորութեանն Խոսրովայ արքայի, եւ կացեալ ժամանակս սակաւս՝ վախճանեցաւ...»**[89]:

Մինչեւ Սմբատի մահը եթե ընդունենք 8 տարիների տեւողություն, ապա դժվար է այս ժամանակամիջոցը թե՛ ինքնին, թե՛ համեմատության մեջ համատեղել Սեբեոսի «ժամանակս սակաւս» արտահայտության հետ: Հիշատակվող նույն 8-ամյա տեւողությամբ Սմբատի մարզպանության եւ Հայաստանում գտնվելու առավել կարճ երկու ժամանակաշրջանները նկարագրելիս Սեբեոսը որեւէ կերպ չի արտահայտում իր վերաբերմունքը ժամանակի տեւողության նկատմամբ: Սա վկայում է տվյալ դեպքում պատմիչի կողմից առավել կարճ ժամանակահատված նկատի ունենալու հանգամանքը:

85 Անդ, էջ 103:
86 Տե՛ս անդ, էջ 104:
87 «Ազգապատում», Ա. հատոր, § 434:
88 Անդ 434:
89 **Սեբէոս**, էջ 104:

Սմբատի վերադարձը Պարսից արքունիք, դպրելով Սեբեոսի շարադրանքում իրադարձության արագ զարգացումից, պետք է կապել արքունիքի համար Սմբատի ներկայության խիստ անհրաժեշտությամբ: Այն կարող էր պայմանավորվել որեւէ պետական նշանակության իրադարձությամբ, ուր Սմբատի մասնակցությունը, ինչպես Հայաստան այցելության ժամանակ, կունենար կարեւոր դերակատարություն եւ կապահովեր ցանկալի արդյունք: Այդպիսի իրադարձություն պետք է համարել նեստորականների հարցով արքունիքի նախաձեռնությամբ գումարվող խոշոր ժողովը Պարսից տերության մայրաքաղաք Տիզբոնում 616 թվականին, որը հաջորդում է նախընթաց մասնավոր մի ժողովի՝ գումարված Մարասպանում[90] 613 թվականին[91]: Սմբատի վերադարձը, պետք է ենթադրել, տեղի է ունեցել Տիզբոնի ժողովին մասնակցելու նպատակով 614-615 թթ. միջեւ ընկած ժամանակահատվածում: Այս դեպքում Պարսից արքունիքում Սմբատի ներկայության ժամանակաշրջանը մինչեւ մահ սպացվում է ընդամենը 3-4 տարի, ինչն առավել համապատասխան է Սեբեոսի «ժամանակս սակաւս» արտահայտության հետ: Ըստ այդմ՝ «Խոսրով Շում» Սմբատ Բագրատունու Արեւելքում պաշտոնավարման ժամանակամիջոցը պետք է համարել 608-614/5 թվականները:

Այսպիսով՝ Արեւելքում Սմբատ Բագրատունու որակապես եւ տարածքային ընդգրկմամբ երկու տարբեր պաշտոնների կատարման ընդհանուր տեւողությունը, բացառելով Հայաստան կարճատեւ այցելությունը, կազմում է շուրջ 16-17 տարի (599-614/5թթ.): «Մարզպանություն» հանդիսացող պաշտոնավարման առաջին շրջանում (599-607 թթ.) Մարզ-Մերվ սահմանային ամրոց-քաղաքում սկսում է գործել Հայ Առաքելական ծիսական եկեղեցին՝ Սասանյան Պարսկաստանի հյուսիս-արեւելյան մարզերում ռազմական առաքելություն իրականացնող հայոց զորաբանակի հոգեւոր հոգածության նպատակով: Պաշտոնակատարման «տանուտէրութիւն» որակվող երկրորդ ժամանակահատվածում (608-614/5 թթ.) արդեն «Խոսրով Շում» անվանվող փոխարքա Սմբատ Բագրատունին ձեռնարկում է նվաճված միջինասիական եւ հարակից տարածքների հայերի համակենտրոնացում եւ ազգային-եկեղեցական լուսավորչական գործունեություն: Այս ընթացքում ազգային եկեղեցական-համայնքային հիմքի վրա ձեւավորվում է Միջին Ասիայի հայոց թեմը՝ կենտրոն ունենալով Մարգ-Մերվի գործող եկեղեցին:

90 Պատմական մարզ Իրանական բարձրավանդակի հյուսիս-արեւմտյան մասում:
91 Տես «Ազգապատում», Ա հ., §§ 437- 439: